

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ ԷՆՃԱՆՈՒԷԼ ՄԱԳՐՈՆԻ ՅԱՊՔԱՆԱԿԸ

Անցնող շաբաթավերջին աշխարհի ուշադրությունը սեւեռած էր Ֆրանսայի վրայ, ուր տեղի ունեցավ նախագահական ընտրություններու երկրորդ փուլը: Իրար դեմ կը պայքարէին չափաւորական էնճանուէլ Մագրոնը եւ ծայրայեղ ազգայնական կուսակցութեան առաջնորդ՝ Մարի Լէ Փանը: Չայներու 66 տոկոսը ստանալով, 39 տարեկան Մագրոն դարձաւ Նափոլիոնէն ի վեր Ֆրանսայի ամենէն երիտասարդ ղեկավարը:

Մարի Լէ Փան իր ընտրարշաւը կառուցած էր գաղթականները երկիրէն արտաքսելու եւ Ֆրանսան եւրոպական Սիուքեմէն դուրս բերելու մեկուսացման ծրագիրներուն վրայ ու այս ուղղութեամբ կը տանէր այլատեսաց քարոզչութիւնը:

Յատկապէս եւրոպայի տարածքին կար մտավախութիւն, որ Տոնալտ Թրամփի օրինակը կրնայ տարածուիլ ովկիանոսի միւս կողմը եւ պատճառ դառնալ եւրոպական միացեալ կառոյցներու քայքայման եւ ծայրայեղական գաղափարներու տարածման: Սակայն, Ֆրանսայի աւանդական կուսակցութիւնները՝ սոցիալիստներն ու պահպանողականները, ընտրութիւններու առաջին փուլին պարտութիւն կրելէ ու ընտրապայքարէն դուրս մնալէ ետք, ցուցաբերեցին քարծր գիտակցութիւն ու կոչ ըրին իրենց կողմնակիցներուն, քուէարկելու նորայայտ Մագրոնին, Լէ Փաններու առաջը առնելու համար:

Էնճանուէլ Մագրոնի յաղթանակը եկաւ կասեցնելու ազգայնամոլական շարժումներու յառաջխաղացքը: Նախապէս նոյնը ըրած էին Դոլանտայի եւ Աւստրիոյ քուէարկողները, ետ մղելով ֆաշիստական գաղափարներով սնանող գործիչները: Սակայն, նկատի առնելով Ֆրանսայի կարեւոր դերակատարութիւնը եւրոպական ու միջազգային թատերաբեմներուն վրայ, Լէ Փանի յաղթանակը կրնար վտանգել ամբողջ ցամաքամասի կայունութիւնը:

Այս բոլորի կողքին, էնճանուէլ Մագրոնի յաղթանակը կարեւոր էր նաեւ հայութեան համար: Նախընտրական շրջանին Մագրոն հանդես եկաւ բազմաթիւ յայտարարութիւններով Յեղասպանութեան ճանաչման եւ Արցախի հարցի խաղաղ լուծման գծով ջանքեր գործադրելու ուղղութեամբ: Ան, Ապրիլ 24-ին Փարիզ մէջ ներկայ եղաւ Յեղասպանութեան 102-ամեակի արարողութեան:

Ֆրանսայի ժողովուրդը դասեր քաղելով Ամերիկայի ընտրութիւններէ, յաջողեցաւ չիյնալ այն ծուղակին մէջ, ուր կը գտնուի այսօր Սիւացեալ Նահանգները՝ Թրամփի ընտրութեան հետեւանքով:

«ՄԱՍԻՍ»

## Մայիսեան Տօներուն Առթիւ Հանդիսութիւններ Արցախի Մէջ



Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարները Ստեփանակերտի մէջ

Մայիս 9-ին, Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցան մայիսեան Եռատօնի՝ Պաշտպանութեան բանակի կազմաւորման, Շուշիի ազատագրման 25 ամեակի եւ Հայրենական մեծ պատերազմի յաղթանակի տօնակատարութիւնները:

Պաշտօնական այցով արդէն մի քանի օրէ Ստեփանակերտ գտնուող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը՝ Լեռնային Ղարաբաղի ներկայ ու նախկին նախագահներ Բակո Սահակեանի եւ Արկաղի Ղուկասեանի հետ ներկայ եղաւ Ստեփանակերտի վերածնունդի հրապարակին մէջ ռազմաթեխնիկայի ու սպառազինութեան ցուցահանդէսին, նոր սպառազինութեան շարքին նաեւ անօդաչու թռչող սարքերու ցուցադրութեան:

Նախագահները բարձրաստիճան պաշտօնեաներու եւ հիւրերու ուղեկցութեամբ այցելեցին նաեւ Ստեփանակերտի յուշահամալիր եւ յարգանքի տուրք մատուցեցին Հայրենական մեծ պատերազմի ընթացքին զոհուածներու ու արցախեան պզտամարտի նահատակներու չիւշատակին:

## Լուս ԱՆՃԵԼՐԱԻ ՄԵՋ Բողոքի Ցոյց Ատրպէյճանական Բռնատիրութեան Դէմ

Անցեալ Շաբաթ օր երեկոյան, Լուս Անճելրաի մէջ Ատրպէյճանի Հիւպատոսարանի նախաձեռնութեամբ, «Օրֆիուս» թատերասրահէն ներս կազմակերպուած էր համերգ՝ «Ատրպէյճանի երաժշտութիւնը կը հանդիպի Լուս Անճելրաին» խորագիրին տակ:

Այս առթիւ, համերգին ներկայ եղող Ամերիկացիները լուսաբանելու նպատակով, ՄԳՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը կազմակերպած էր բողոքի ցոյց, որու ընթացքին, սրահի մուտքին ժողովուրդին բաժնուեցան թուղթիկներ, ուր բացատրուած էին Ատրպէյճանի բռնատիրական իշխանութիւններու վարքագիծը՝ ընդդիմախօսներու, ազատութիւններու, փոքրամասնութիւններու եւ հայութեան դէմ:

Արարողութենէն ետք, նախագահները՝ քաղաքական, ռազմական ու հոգեւոր դասի բարձրաստիճան ներկայացուցիչներու հետ ուղեւորուեցան Լեռնային Ղարաբաղի հինաւուրց մայրաքաղաք Շուշի, ծաղիկներ դնելով Թանկ-յուշարձանին, այնուհետեւ վազգէն Սարգսեանի արձանի մօտ յարգանքի տուրք մատուցուեցաւ անոր չիւշատակին:

Ստեփանակերտի կեդրոնական փողոցներով պարբերաբար շարային քայլերթ կը կատարէին զինուորական ստորաբաժանումները: Ամէնուէջ փակցուած էին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դրօշներն ու շնորհաւորական պատասուները:

Տօնը ոչ միայն յղեկեանական էր, այլեւ բացառիկ էր իր մարդաշատութեամբ: Գրաւուած էին բոլոր հիւրանոցային համարները ու զբօսաշրջիկներէն շատեր չեն կրցած նոյնիսկ օրավարձով բնակարաններ գտնել:

Միջոցառումները եզրափակուեցան երեկոյան Ստեփանակերտի հրապարակի վրայ կազմակերպուած տօնական համերգով ու հրավառութեամբ:



Հայկական բողոք Ատրպէյճանի դէմ  
Թերթիկները կարդացողները Շար.ը էջ 4

## Հայ Ամերիկեան Խորհուրդը Կոչ Կ'ընէ Մասնակցելու Մայիս 16-ի Ընտրութիւններուն



Լուս ԱՆՃԵԼՐԱԻ  
Քաղաքապետական Խորհուրդի  
Թեկնածու Սոնիքա Ռոտրիկեզ

ՄԳՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) կոչ ըրաւ Լուս Անճելրաի որոշ շրջաններուն մէջ բնակող հայութեան՝ մասնակցելու Մայիս 16-ին տեղի ունենալիք երեք ընտրութիւններու:

Լուս Անճելրաի Քաղաքապետական Խորհուրդի 7-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Սանլէնտ եւ Քահունկա շրջանները, ՀԱԽ իր գորակցութիւնը կը յայտնէ Մոնիքա Ռոտրիկեզին:

Որպէս երկարամեայ համայնքային գործիչ, Մոնիքա Ռոտրիկեզ իր ուշադրութեան կեդրոնը դարձուցած է այս շրջաններէն, որոնք տարիներու ընթացքին անտեսուած են քաղաքապետարանի իրարայաջորդ անդամներուն կողմէ:

Մոնիքա Ռոտրիկեզի մրցակիցը՝ Կարօ Թորոսեան, թէեւ հայ մըն է, սակայն ան կը գործակցի անհաստեղծ հետ, որոնք կը գործեն Ամերիկահայ համայնքի շահերուն դէմ:

Լուս Անճելրաի Ուսումնական Խորհուրդի 4-րդ ընտրաշրջանէն ներս ՀԱԽ իր գորակցութիւնը կը յայտնէ Սթիֆ Զիմըրին: Ան որպէս Ուսումնական Խորհուրդի նախագահ, մեծ աշխատանք կը տանի դպրոցներէն ներս Հայկական Յեղասպանութեան ուսուցման գծով:

Նոյն ուսումնական Խորհուրդի 6-րդ ընտրաշրջանէն ներս ՀԱԽ իր գորակցութիւնը կը յայտնէ համայնքային գործիչ Իմէլտա Փատիային:

Այս առթիւ ՀԱԽ կը տեղեկացնէ թէ, Սթիֆ Զիմըրի եւ Իմէլտա Փատիայի մրցակիցները կը վայելեն աջակցութիւնը ուսուցիչներու խմբաւորուածներու, որոնք կը ֆինանսաւորուին թուրք կրօնական գործիչ՝ Կուլէնի հետ առնչութիւն ունեցող կազմակերպութիւններու կողմէ:



ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Վիզէն Սարգսեանի Անգագոյշ ու Վտանգաւոր Յայտարարութիւնը

ՅԱԿՈՔ ԲԱԴԱԼՅԱՆ

Թուրքիան, հանդիսանալով ՆԱՏՕ անդամ, աշխոյժ ռազմա-քաղաքական գործունէութիւն է իրականացնում Ռուսաստանի հարաւային սահմաններում, ստեղծելով վտանգ Մոսկուայի համար: «Ինտերֆաքս» ռուսական գործակալութիւնն այդ խօսքը վերագրում է Հայաստանի պաշտպանութեան նախարար Վիզէն Սարգսեանին:

«Ես կարծում եմ, որ, երբ մենք խօսում ենք տարածաշրջանի երկրների գործակցութեան մասին ՆԱՏՕ անդամ երկրների հետ եւ այլն, ապա երկիրը, որը ամէնից շատ ներկայացուած է մեր տարածաշրջանում դաշինքի երկրներից, դա հենց Թուրքիան է, որը բաց կերպով անմիջականորէն Ռուսաստանի սահմանին զարգացնում է աշխոյժ ռազմա-քաղաքական գործունէութիւն Ատրպէյջանում», ըստ «Ինտերֆաքսի» ասում է Վիզէն Սարգսեանը: Նա նշում է, թէ հասկանում է, որ Ռուսաստանն ու Թուրքիան երկխօսութեան դրական փուլում են, բայց «ինքն օրինակ բաց չէր թողնի այդ լուրջ վտանգը տեսադաշտից»:

Հայաստանի պաշտպանութեան նախարարի խօսքում կայ բաւական անզգոյշ ձեւակերպում, որը կարող է պարունակել վտանգաւոր ասոցիացիա: Յամենայն դէպս, Վիզէն Սարգսեանը փորձելով Ռուսաստանի ուղղորդութիւնը հրաւիրել Ատրպէյջանում Թուրքիայի աշխոյժ գործունէութեան վրայ՝ ներկայացնելով դա վտանգ ՌԴ համար, յատկապէս Դաղստանի հետ սահմանին, տողատակում դնում է ՆԱՏՕ խնդիրը:

Թուրքիայի ՆԱՏՕ անդամ լի-

նելու հանգամանքի շեշտադրումը աւելորդ է եւ վտանգաւոր:

Ինչ կապ ունի՝ Թուրքիան ՆԱՏՕ անդամ է, թէ ոչ՝ Ատրպէյջանի հետ Անկարայի գործակցութիւնը Ռուսաստանի համար իբրեւ վտանգ ներկայացնելու առումով: Եթէ Թուրքիան ՆԱՏՕ անդամ չլինէր, Ատրպէյջանի հետ սերտ ռազմա-քաղաքական գործակցութիւնն այդ դէպքում ըստ Վիզէն Սարգսեանի վտանգ կ'ներկայացնէր Ռուսաստանի համար, թէ՞ ոչ:

Հասկանալի է, թէ ինչ շարժառիթ կայ Վիզէն Սարգսեանի ուղղորդութիւնը հրաւիրել հանգամանքի վրայ, որ Թուրք-ատրպէյջանական գործակցութիւնը ռազմավարական վտանգ է Մոսկուայի համար:

Իսկ ինչ է կարծում Վիզէն Սարգսեանը, Մոսկուան գիտակցում է այդ վտանգը, ունի՞ այդչափ ռազմավարական պատկերացում, թէ՞ ոչ: Իսկ ինչ է առաջարկում Մոսկուային Վիզէն Սարգսեանը: Վիզէն Սարգսեանի կարծիքով, Ռուս-ատրպէյջանական ռազմատեխնիկական եւ ռազմա-քաղաքական գործակցութիւնն իր ծաւալով ու բնոյթով զիջում է Թուրք-ադրբեջանականին: Ռուսաստանը վերջին տասնամեակում հանդիսացել է Ատրպէյջանի թիւ մէկ ռազմա-տեխնիկական մատակարարը, այդ երկրի հետ կնքել մի շարք ռազմա-քաղաքական փաստաթղթեր ու ձեռք բերել պայմանաւորութիւններ: Այդ ամենի շարժառիթային հիմքում առկայ գործոններից մէկն էլ նաեւ հենց Թուրք-ատրպէյջանական գործակցութեանը հակադրելն է, Ռուսաստանի համար այն վտանգի

տեսանկիւնից, որ մատնանշում է Վիզէն Սարգսեանը: Ընդ որում, հակադրութիւնը ջանք, որը մեծապէս վտանգաւոր է արդէն Հայաստանի շահի տեսանկիւնից, ինչը գործնական տեսքով մէկ անգամ արդէն դրսեւորուել է Ապրիլի չորս օրերի ընթացքում, ինչպէս նաեւ դրան նախորդած երկու-երեք տարիների անող լարուածութեան ընթացքում:

Ռուսաստանի համար Թուրք-ատրպէյջանական վտանգները հիմնաւորելու փոխարէն, Հայաստանի ռազմա-քաղաքական բարձրագոյն իշխանութեան խնդիրը պէտք է լինի Հայաստանի համար վտանգները մատնանշելն ու դրանց մասին խօսելը: Ըստ այդմ, մեղմ ասած առաւել համարժէք, ու արդիւնաւետութեան եւ պետական արժանապատուութեան տեսանկիւնից եթէ Հայաստանի պաշտպանութեան նախարարն ուղղակի խօսէր այն մասին, որ Թուրք-ատրպէյջանական գործակցութեան ռազմավարական վտանգն ու ռիսկերը Ռուս-ատրպէյջանական ռազմավարական ռազմա-քաղաքական գործակցութեամբ հակադրուելու ոչ միայն խնդիր լուծում է Մոսկուայի համար, այլ էլ աւելի խորացում է, քանի որ հակասում է Հայաստանի շահին եւ ստեղծում սպառնալիք Հայաստանի համար:

Մինչդեռ, Վիզէն Սարգսեանն իր ձեւակերպումներում ինքն է անզգոյշ՝ Հայաստանի համար ռիսկ առաջացնելու տեսանկիւնից: Խօսքը հենց Թուրքիայի ՆԱՏՕ անդամ լինելու հանգամանքի շեշտադրումն է Ռուսաստանի հարաւային սահմանին Ատրպէյջանի հետ գործակցութեան մասին խօսքի համատեքստում: Սարգսեանը

փաստօրէն տողատակում ակնարկում է, թէ ի դեմս անդամ Թուրքիայի ՆԱՏՕ-ն է ամրանում Ռուսաստանի հարաւային սահմանին: Սարգսեանի ակնկալիքն ըստ երեւոյթին այն է, թէ այդ հանգամանքը Մոսկուայի համար առաւել զգալի կը դարձնի Թուրք-ատրպէյջանական գործակցութեան վտանգը:

Ըստ ամենայնի, դրա համար էլ Վիզէն Սարգսեանը նշում է, թէ Անկարայի հետ Մոսկուան այժմ երկխօսում է, բայց «ինքը չէր անտեսի այդ վտանգը»: Մեղմ ասած հարց է առաջանում՝ արդեօք այն վտանգը, թէ Թուրքիան, չնայած Ռուսաստանի հետ երկխօսութեանը, ՆԱՏՕ անդամ է եւ Մոսկուան թող չմոռանայ այդ մասին:

Փաստացի, կամայ, թէ ակամա, Վիզէն Սարգսեանը թէեւ փորձում է Թուրքիան, բայց համատեքստում հենց ՆԱՏՕ-ն է ներկայացնում Մոսկուայի հարաւային սահմանի սպառնալիք, այսինքն այդպիսով Հայաստանը ներքաշելով ՌԴ-ՆԱՏՕ հակադրութեան մէջ: Այն դէպքում, երբ այդօրինակ թէ ուղղակի, թէ անգամ անուղղակի հակադրութիւնից խուսափելն է Հայաստանի ռազմավարական խնդիրը, ինչը պահանջում է չափազանց զգուշաւորութիւն քաղաքական յայտարարութիւններում: Առաւել եւս, երբ ռազմավարական իմաստով, Թուրքիա-Ատրպէյջան գործակցութիւնն աւելի շատ վտանգ է հենց ՆԱՏՕ ռազմավարական շահին, քան Ռուսաստանի:

Յամենայն դէպս, քանի դեռ Հայաստանի ռազմա-քաղաքական իշխանութիւնն իր գլխաւոր խնդիրը կը համարի այդ համատեքստում աւելի շատ Ռուսաստանի, քան Հայաստանի շահերն ու վտանգները բարձրաձայնելը:

«ԼՐԱԳԻՐ»

Կարէն Կարապետեանի «Դրայլը» Յասաւ Հայոց Լեզուին

ՀԱՅՎ ԴԱԻԹԵԱՆ

Լեզուի պետական տեսչութիւնը լուծարելու կառավարութեան մտադրութիւնը այլեւս վերջնական է:

Այս մասին նախօրէին տարածած պաշտօնական հաղորդագրութեան մէջ տեղեկացրել է կառավարութեան լրատուական ծառայութիւնը: Կարէն Կարապետեանի գլխաւորութեամբ՝ կառավարութիւնում տեղի է ունեցել տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի հերթական նիստը, որտեղ հաւանութիւն է տրուած կրթութեան տեսչական մարմին ստեղծելու նախագծին: Ըստ այդմ՝ նախատեսուած է լուծարել կրթութեան գործող տեսչութիւնը՝ որոշումն ընդունելուց երեք ամիս անց, իսկ Լեզուի պետական տեսչութիւնը՝ տարեկերջին:

Հնարաւոր է, որ լեզուի տեսչութեան աշխատանքի արդիւնաւետութեան հետ կապուած վարչապետի դժգոհութիւնը օբիեկտիւ է: Խնդիրն այստեղ այն չէ, թէ իրականում որքանով է լա՛հ կամ վատ աշխատում լեզուի պետական տեսչութիւնը, ինչ պրոգնոզ կէ տալիս կամ էլ չի տալիս:

Խնդիրն այն է, որ անկախութեան շրջանում Հայոց լեզուի նկատմամբ պետական վերաբերմունքի դեւսեւորումը պետական

քաղաքականութիւն է: Հզօր երկրները սեփական լեզուի լոբբինգի, տարածման, զարգացման եւ պաշտպանութեան նպատակով խոշոր գումարներ են ծախսում՝ քաջ հասկանալով, որ լեզուի տարածումը ազդեցութեան շրջանակը ընդլայնելու ամենարդիւնաւէտ միջոցն է: Այս տեսանկիւնից, եթէ անգամ լեզուի տեսչութիւնն ամենավատ աշխատող մարմինն է, պէտք է ոչ թէ այն լուծարել, այլ արդիւնաւորութիւնը բարձրացնելու լուրջ ծրագիր մշակել: Լեզուական մարմիններն աշխարհի ոչ մի երկրում եկամտունք չեն բերում, դրանք աւելի շատ դիտուում են դիւանագիտական եւ քաղաքական խնդիրներ լուծելու միջոց: Հայոց լեզուն, իհարկէ, տարածականութեան առումով չի կարող համեմատուել ո՛չ անգլերէնի, ո՛չ ռուսերէնի, ո՛չ չինարէնի, ո՛չ էլ գերմաներէնի ու ֆրանսերէնի հետ, որոնք ՄԱԿ-ի կողմից ճանաչուած միջազգային լեզուներ են: Լեհերէնն, օրինակ, միջազգային լեզու չէ, բայց այդ երկիրն ունի պետական մարմին, որը զբաղւում է լեհերէնի պաշտպանութեամբ: Հայոց լեզուն եւս այսօր կարիք ունի տարածման՝ առաջին հերթին ազգութեամբ հայ մարդկանց շրջանում: Մենք խոշոր սփիւռք ունեցող երկիր ենք, սակայն առ այսօր հայերէնի լեզուի մասնակցութիւնը հաւաստող միջազգային սերտիֆիկատների հա-

մակարգ չենք ներդրել: Ո՞րն է այն փաստաթուղթը, որը հաւաստում է հայերէնի իմացութիւնը. հայկական դպրոցներում կրթութիւն ունեցող մարդկանց դէպքում այդ հարցի պատասխանը պարզ է՝ դա ատեստատում առկայ գնահատականն է հայերէնից: Սակայն մենք ունենք արտերկրում ապրող բազմաթիւ հայեր, ովքեր այդ խնդրին այսօր չեն կարողանում լուծում տալ: Սա, իհարկէ, միակ պրակտիկ գործը չէ, որը կարող է դառնալ լեզուի տեսչութեան գործառնոյթը:

Տեսչութեան փոխարէն՝ գուցէ կարելի է ունենալ կոմիտէ. ի դէպ, նման առաջարկութիւն, մեր տեղեկութիւններով, քննարկուել է՝ հնարաւոր է գործակալութիւն. կարելու է ինչ: Կարելու է այն է, որ Հայաստանի Հանրապետութիւնում անպայման պէտք է լինի լեզուի մասին ՀՀ օրէնքի իրականացմանը հետամուտ, հայերէնի զարգացման եւ տարածման խնդիրներով զբաղուող կառույց, եւ որ ամենակարելուն է, այդ կառույցի գործունէութեան արդիւնաւետութիւնը չի կարելի չափել պիզնեսի կանոններով: Ամբողջ խնդիրն այն է, թէ այս պարզ ճշմարտութիւնը որքանով է ընկալում դրայլի սիրահար, հայերէնով շատ վատ խօսող եւ ռուսերէնի ազդեցութեան տակ մնացած մեր վարչապետը:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY



ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«ԵԼՔ» Դաշինքը Ընկերային Աջակցութիւն Կ'առաջարկէ Ընտրակաշառքէն Հրաժարած Քաղաքացիներուն՝ 15 Հազար Դրամ

Երեւանի աւագանիի ընտրութիւններուն ընտրուելէ ետք «ԵԼՔ» դաշինքը Երեւան քաղաքի պիւտձէյին մէջ փոփոխութիւններ կը սահմանէ եւ ընկերային աջակցութիւն կ'առաջարկէ այն քաղաքացիներուն, որոնք հրաժարած են ընտրակաշառքէն: Այս մասին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտարարած է «ԵԼՔ» դաշինքին ՀՀ Ազգային ժողովի 6-րդ գումարման նորընտիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը:



Երեւանի քաղաքապետի թեկնածու՝ Նիկոլ Փաշինեան

Եան պատասխանած է. «Մենք հաւատում ենք մեր ընտրողներին»: Խօսելով այն մասին, թէ արդեօք կեդրոնական ընտրական յանձնաժողովը այդ մէկը որպէս ընտրակաշառք չի դիտարկեր, Փաշինեան ընդգծած է. «Թող միայն փորձի»:

Համապատասխան դրոյթը ներառուած է դաշինքի նախընտրական ծրագրին մէջ: «Եթէ քաղաքացին համապատասխան դիմում ներկայացնի ու յայտնի, որ իրեն ընտրակաշառք են առաջարկել, Երեւանի պիւտձէյից նա 15 հազարական դրամի հափով սոցիալական աջակցութիւն կը ստանայ»:

Այն հարցին, թէ ինչպէս պիտի ստուգեն, որ քաղաքացին ընտրակաշառք չէ ստացած, Նիկոլ Փաշինեանը

«ՀԱԿ-ը Պիտի Շարունակէ Իր Գործունէութիւնը». Լեւոն Զուրապեան

«Հայ ազգային գոնկրէսը պիտի շարունակէ իր գործունէութիւնը, քաղաքական ուժի նպատակները չեն փոխուած»:



ՀԱԿ կուսակցութեան փոխնախագահ Լեւոն Զուրապեան

իրականում պարտութիւն չէ: Մաքուր ընտրութիւններով մի օր կը մրցակցենք եւ կը տեսնենք, թէ իրենցից ինչ կը մնայ, եւ այդ օրը գալու է»:

Այս մասին Մայիս 9-ին «Յաղթանակ» զբօսալստի մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսած է ՀԱԿ կուսակցութեան փոխնախագահ Լեւոն Զուրապեանը:

«Մեր օրակարգը նոյնն է, մենք հասնելու ենք յաղթանակի, մենք թոյլ չենք տայ, որ մեր ժողովուրդը նման վիճակում մնայ», - ըսած է Զուրապեանը:

Դիտարկման, թէ անգամ իշխանութիւնը փոփոխուած կը յայտնէ, որ ՀԱԿ-ը նոր ձեւաւորուած խորհրդարանին մէջ չէ, Լեւոն Զուրապեան ըսած է, որ պէտք չէ հաւատալ այդ փոփոխութիւններուն. «Դրանք կոկորդիլոսի արցունքներ են, իրենց նպատակն էր, որ ՀԱԿ-ը չլինէր խորհրդարանում»:

Անդրադառնալով խորհրդարանական ընտրութիւններուն ՀԱԿ-ի պարտութեան՝ Լեւոն Զուրապեան ըսած է. «Պարտութիւնը ընտրակեղծարարութեան հետեւաքնով ես չեմ համարում կորուստ, դա

«Տնտեսական Աճը Պետք է Հասնի Որակի Մը, Որպէսզի Փոփոխութիւն Բերէ». Վարչապետ

ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեանը Մայիս 6-ին «Յաղթանակ» զբօսալստի մէջ անմար կրակի մօտ ծաղիկներ դնելէ ետք պատասխանած է լրագրողներու հարցերուն եւ ձաշած դաշտային ձաշարանին մէջ:

Հարցին, թէ ինչ փոփոխութիւններ կը սպասուին կառավարութեան մէջ, ան ըսած է՝ «Կ'իմանաք»: Ան նշած է, որ այս 8 ամսուան ընթացքին իրականացուած փոփոխութիւններու վերաբերեալ բազմաթիւ հարցերու լուծումներ, հաշուետուութիւններ ներկայացուցած են: Ինչ կը վերաբերի անոր, թէ ինչու մարդիկ չեն զգար իրենց մաշիկ վրայ այդ փոփոխութիւնները, վարչապետը ըսած է, որ այդ աճը ճգնաժամային կէտի պէտք է հասնի, որպէսզի որակական փոփոխութիւն ըլլայ:

«Բազմիցս յայտարարել ենք ձեզ, թէ ինչի մենք մեզ վրայ, սառնարանում չենք զգում տնտեսական աճի ցուցանիշները, պատասխանել եմ, որ տնտեսական աճը պէտք է հասնի մի քրիթիքական որակի, որպէսզի դա որակական փոփոխութիւն տայ», - ըսած է ան:

Ներդրողներու ներգրաւման առումով ան ըսած է, որ խնդիրներ չկան եւ գործընթացը աշխատանքային փուլի մէջ է: «Երբ ներդրումներ կ'անեն, կը յայտարարենք, դուք կը տեսնէք», - աւելցուցած է ան:

Անդրադառնալով հարցին, թէ ինչպէս կը վերաբերի «ՍԱՍ»-ի Արտակի ժողովին, վարչապետը ըսած է, որ եթէ այն ճիշդ է, վատ կը վերաբերուի, եթէ ճիշդ չէ, իրաւապահ մարմինները կը յայտարարեն:

«Ծառուկեան» Դաշինքի Թեկնածուներու Դիմումները Լրջագոյն Գայթակղութիւն Են

Այն, որ «Ծառուկեան» դաշինքի թեկնածուները մէկը միւսի ետեւէն յայտարարած են, որ պատգամաւորութենէն հրաժարելու ինքնաբացարկներ չեն ներկայացուցած, իրականութեան մէջ լրջագոյն գայթակղութիւն է, որ պէտք է քննուի իրաւապահներու կողմէ:

Այս մասին Tert.am-ի հետ զրոյցի ընթացքին յայտնած է «Իրագիտական քաղաքացի միւլտրոլ» ՀԿ նախագահ Դանիէլ Իոաննիսեանը:

«Սա բաւական լուրջ բան է, երբ մարդու ստորագրութիւնն ինչ-որ տեղ կայ, բայց այդ մարդն ասում է՝ ես չեմ ստորագրել դա: Սա, փաստացի, հարցում է յանցագործութեան, կեղծիքի մասին եւ դրանով իրաւապահները պէտք է զբաղուեն», - ըսած է Դանիէլ Իոաննիսեանը:

Յիշեցնենք, որ Կեդրոնական ընտրական յանձնաժողով այցելած էին «Ծառուկեան» դաշինքի այն ներկայացուցիչները, որոնց ինքնաբացարկի դիմումները հրապարակուած էին: Անոնց շարքին՝ Մանուկ Սուքիասեանը, Հրանդ Դաւթեանը, Մուշեղ Սաղաթէյեանը, Արարատ Զուրապեանը, Խաչիկ Մանուկեանը եւ այլք: Ինքնաբացարկի դիմում ներկայացուցած անձանց շարքին էին նաեւ Արարատ

Զուրապեանը, Արթուր Մանուկեանը, Սամուէլ Ադամեանը, Սերկէյ Բազրատեանը, Վազգէն Պողոսեանը, Նափոլէոն Ազիզեանը, Վահան Կարապետեանը եւ այլք:

Դիտարկման, որ եթէ իրենք ինքնաբացարկի դիմում չեն գրած, եւ իրականութեան մէջ ստորագրութիւնները կեղծուած չեն, ուրեմն զանգուածաբար տրուած են նման ստորագրութիւններ, Դանիէլ Իոաննիսեանը նկատած է. «Էդ մարդիկ ասում են՝ «չեմ ստորագրել», հիմա ես փորձում եմ հաւատալ, որ էդ մարդիկ սուտ չեն ասում: Իսկ եթէ մարդիկ նախապէս ինքնաբացարկի դիմում են գրել, ինչու են նման բան արել»:

«Առայժմ միակ տուժողը, թէկուզ բարոյապէս, հոգեբանօրէն տուժողը դա Գագիկ Ծառուկեանն է, որովհետեւ տեղի է ունենում մի բան նրա դեկավարած դաշինքում, որտեղ ինքը չկայ կարծես թէ», - «Ազատութեան» հետ զրոյցին ըսած է քաղաքական մեկնաբան Յակոբ Պատալեանը:

Պատալեանի կարծիքով, ԿԸՀ երթալն ու մանդատ պահանջելը թեկնածուներու նախաձեռնութիւնը չէր. անոնք չէին կրնար Սերժ Սարգսեանի դժգոհութիւնը յաւաքացնող բան մը ընել:

Սամուէլ Ալեքսանեանի Յետընտրական Ցնցումը

«Հայազն» կուսակցութեան ղեկավար Արմէն Մկրտչեանն ու քաղթեխնոլոկ Կարէն Քոչարեանը որոշած են զբաղուել շաքարաւազի, ալիւրի, ձէթի, հաւի պոլտի եւ շաքար մը այլ ապրանքատեսակներու ներկրմամբ: Այդ ապրանքատեսակներու շուկային մէջ մենաշնորհ ունին Աժ ՀՀԿ-ական պատգամաւոր Սամուէլ Ալեքսանեանի հետ կապակցուող ընկերութիւնները:

Մինչ այժմ ոչ մէկը չէ կրցած այս շուկային մէջ մարտահրաւէր նետել Սամուէլ Ալեքսանեանին: Իսկ նման փորձ ընողներուն ալ կամ սպառնացած են, կամ պատժած, կամ ալ «գնած»:

«Առաջին լրատուական»-ի հետ զրոյցի ընթացքին Արմէն Մկրտչեան ըսած է, որ արդէն միջազգային կազմակերպութիւններու հետ ունին յստակ պայմանաւորուածութիւններ, հանդիպումները կայացած են, եւ յառաջիկայ քանի մը օրերու ընթացքին շաքարաւազի առաջին խմբաքանակը կը հասնի Հայաստան:

«Շաքարաւազի ներկրման ամբողջ պրոցեսը լինելու է հրապարակային, որեւէ թաքուն գործարք, հանդիպում, պայմանաւորուածութիւն չի լինելու, քանի որ մեր գերնպատակը մենաշնորհ

կոչուած միջը կոտրելն է: Մենք ցանկանում ենք ցոյց տալ, թէ ինչպէս կարելի է օրինական ճանապարհով, բոլոր հարկերը վճարելով շաքարաւազ ներկրել, եւ դրա արդիւնքում որքան կարժեանայ այն շուկայում», ըսած է ան:

Արմէն Մկրտչեանը նաեւ ըսած է, որ իրենց հաշուարկներով՝ շաքարաւազը աւելի աժան պիտի ըլլայ:

Իր հերթին, Կարէն Քոչարեանը ըսած է, որ ներկայիս ընկերութիւն կը գրանցէ, որու միջոցաւ ալ պիտի ներկրէ հաւի պոլտ, չի բացառեր նաեւ՝ ձէթ, ալիւր, կարգը:

Հետաքրքիր է, ինչ հակաքայլ պիտի ընէ Սամուէլ Ալեքսանեանը: Ժամանակին, օրինակ, ըստ մամուլի՝ ան ատրճանակ պահած էր ՏՄՊՊՀ նախագահի գլխուն, որ համարձակած էր հակամենաշնորհային որոշում ընդունիլ:

Սամուէլ Ալեքսանեանը Հայաստանի մէջ իշխող տնտեսաքաղաքական համակարգի ամենախոշոր «նուիրատուներէն» մէկն է, ստուերային պիւտձէյի հիմքերէն մէկը: Այդ պիւտձէյին կը ֆինանսաւորուին իշխող համակարգի «միջոցառումները», մասնաւորապէս՝ ընտրութիւնները:

ՀՀԿ-ական Տնօրէններէն Պահանջուած Զայներու Թիւր Աւելցած Է

«Ժողովուրդ» թերթը կը գրէ. «Պետական հիմնարկներում այս օրերին սկսուել է Երեւանի աւագանու ընտրութիւններէ համար ՀՀԿ օգտին ցուցակներէ հաւաքագրման գործընթացը: Խորհրդարանական ընտրութիւններէից առաջ սքանտալում յայտնուած դպրոցի եւ մանկապատէզի տնօրէնները ոչ միայն դաս չեն քաղել խայտառակութիւնը յետոյ, այլեւ շարունակուած են էլ աւելի եռանդուն կերպով ձայների ու ցուցակների հաւաք

ագրման գործընթացը: «Մեզ յայտնի դարձաւ՝ պետական հիմնարկների աշխատակիցներին հրահանգում է կոնկրետ թիւով ձայներ բերել, ընդ որում, եթէ խորհրդարանական ընտրութիւններին տնօրէնները իւրաքանչիւր աշխատակցի վրայ 10 ձայնի պարտականութիւն էին դրել, ապա աւագանու ընտրութիւններում կրկնապատկել են պահանջը. իւրաքանչիւրը ՀՀԿ օգտին պէտք է բերի 20 ձայն»:



ԼՈՒՐԵՐ

Ամերիկեան Վերլուծաբաններու Կարծիքով ԼՂ Հակամարտութիւնը Կրնայ Սրուիլ

Հայաստանի մէջ խորհրդարանի դերի մեծացումը որեւէ ազդեցութիւն պիտի չունենայ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման վրայ, կը կարծեն ամերիկեան վերլուծաբանները: Այդ մասին հաղորդած է «Ամերիկայի Ձայնը»:

«Կը կասկածիմ, որ խորհրդարանականները աւելի պատրաստ ըլլան խաղաղութեան հաստատման համար քան նախագահ Սարգսեանը: Հնարաւոր է նոյնիսկ՝ ընդհակառակը», - Ամերիկեան արտաքին քաղաքականութեան խորհուրդի փորձագէտ Սթիւըն Պլանքի խօսքով, խորհրդարանները աւանդաբար աւելի շատ կ'առաջնորդուին հանրային կարծիքով, քան կը ներգզեն անոր վրայ: Սակայն, հակամարտութիւնը սառեցուած վիճակի մէջ պահպանել այլեւս նոյնպէս հնարաւոր չէ.

«Բանակցային գործընթացի մէջ առաջընթաց չգրանցելու պարագային, պիտի աճի բռնութիւններու կրկնութեան հաւանականութիւնը, ինչպէս եղաւ մէկ տարի առաջ: Սակայն կողմերու ձեռքի գէնքերը այսօր շատ աւելի բարձրակարգ են, սա կրնայ յանգեցնել աւելի ծանր հետեւանքներու»:

Պլանքի կարծիքով, այսօր միջնորդներէն եւ ոչ մէկը, այդ շարքին նաեւ Միացեալ Նահանգները, հանդէս չի գար խաղաղութեան նոր նախագիծով, անտեսելով ինդիքի կարեւորութիւնն ու հնարաւոր պատերազմի հետ կապուած վտանգները.

«Իրավիճակը կրնար փոխ-

ուիլ, եթէ Միացեալ Նահանգները հանդէս գար խաղաղութեան ծրագրով՝ կողմերուն խրախուսելով քննարկել այն բանակցային սեղանի շուրջ, սակայն, այդ մէկը նոյնպէս տեղի չունենար»:

Քարնէկիի հաստատութեան վերլուծաբան Թոմաս Տէ Վաալը, ընդգծելով դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման կարեւորութիւնը, նշած է նաեւ, որ այն թոյլ կու տայ բարելաւել տարածաշրջանի տնտեսական իրավիճակը: Մասնաւորապէս, ինդիքի կարգաւորումը թոյլ կու տայ բարելաւել հայ-թրքական յարաբերութիւնները, որոնք սառեցուած կը մնան Ատրպէյճանի ջանքերով, նշած է Տէ Վաալը:

Սթիւըն Պլանքի խօսքով սակայն, Երեւանի եւ Անգարայի յարաբերութիւններու բարելաւման համար Թուրքիան առաջին հերթին պէտք է հետեւի Գերմանիոյ օրինակին, որ փարատեց բոլոր կասկածները առաջինը ճանչնաւ իր հրեաներու Ողջակիզումը.

«Հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման համար անհրաժեշտ է երկու հանգամանք, առաջինը՝ Լեռնային Ղարաբաղի ինդիքի կարգաւորումը, եւ երկրորդը՝ Թուրքիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան լիակատար ճանաչումը»:

Մինչ այդ, Թուրքիոյ նկատմամբ լիարժէք վստահութիւն չի կրնար ըլլալ եւ անոր համար ամենաբարձր գինը պիտի վճարէ ինքը՝ Թուրքիան, համոզուած է Սթիւըն Պլանքը:

Լաւրով. «Հայաստանի Մէջ Տեղակայուած Ռուսական Խարիսխը Պատրաստ Է Պայքարիլ Իսլամական Պետութեան Դէմ»

«Ռուսաստանի մէջ արգիլուած «Իսլամական պետութիւն» ահաբեկչական խմբաւորումը վար չի դնել գէնքերը: Խմբաւորման գորհայինները աշխուժօրէն կը գործեն ոչ միայն Մերձաւոր Արեւելքի ու Հիւսիսային Աֆրիկէի մէջ, այլեւ ռուսական սահմաններու հարեւանութեամբ»:

«Միր 24» հեռուստարնկերութեան տուած հարցազրոյցին մէջ ըսած է ՌԴ ԱԳ նախարար Սերկէյ Լաւրովը, վստահութիւն չայտնելով, որ Ռուսաստանը անպայման պիտի հասնի այն բանին, որ ահաբեկչական խմբաւորումը յանձնուի:

«Այս փուլին մէջ այն աշխույժ կը գործէ Աֆղանստանի մէջ, յատկապէս այդ երկրի հիւսիսային շրջաններուն մէջ, որոնք սահմանակից են մեր դաշնակից երկիրներուն: ՀԱՊԿ անդամ երկիրներու ռժաշին ստորաբաժանումները մշտական պատրաստուածութեան մէջ են: Պատրաստուած են նաեւ



ՌԴ ԱԳ նախարար Սերկէյ Լաւրով ռուսական ռազմապազանները, որոնք տեղակայուած են Տաճիկստանի, Ղրղզստանի ու Հայաստանի մէջ: Քանի դեռ այդ չարիքը ոչնչացուած չէ, մեր առաջնահերթութիւնները կը մնան նոյնը», - ըսած է Լաւրով:


Ատրպէյճանական Բռնատիրութեան Դէմ

Շարունակուած էջ 1-էն

գարմանք կը յայտնէին, որ տեղեակ չէին Ատրպէյճանի մէջ տիրող կացութեան մասին:

Այս առթիւ, ՀԱՍ-ի անդամներէն Գրիգոր Մոլոյեան յայտարարեց, - «Մենք հոս չենք եկած բողոքելու համար Ազերի մշակույթին դէմ: Մենք հոս ենք բողոքելու՝ Ալիեւի ընտանիքի բռնատիրութեան դէմ, որու հետեւանքով քաղաքական բանտարկեալները կը պահուին անտեսելով անոնց մարդակային իրաւունքները, իսկ փոքրամասնութիւններու իրաւունքները կը ոտնակոխուին: Կը յուսանք որ, մեր ձայնը լսելի կը դառնայ Ատրպէյճանի հիւպատոսին եւ իր Ամերիկացի հիւրերը տեղեակ կը դառնան Ալիեւի ռեժիմի գործած ոճիրներու մասին»:

Թուրքիոյ Ոստիկանութիւնը Յարձակած Է Հայոց Ցեղասպանութեան Մասին Գիրքեր Հրատարակող Հրատարակչատան Վրայ



Հրատարակիչ Ռակրա Ջարաքուլու

Թրքական ոստիկանութիւնը յարձակած է յայտնի հրատարակախօս, Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած գործիչ Ռակրա Ջարաքուլուի եւ անոր կնոջ՝ Ալիշէնուր Ջարաքուլուի հիմնադրած «Պէլլէ» հրատարակչատան վրայ: Այս մասին յայտնած է թրքական «Demokrathaber.net»-ը:

Շուրջ 40 տարի ընդդիմադիր բովանդակութեամբ գրականութեան լոյս ընծայմամբ գեղողոզ «Պէլլէ» հրատարակչատունէն, ոստիկանութիւնը գրաւած է երկու հազար գիրք: Թէպէտ ոստիկանական աշխատակիցները յայտնած են, որ «Պետութիւն չունեցող քիւրտեր» եւ «Մահէն աւելի դժուար որոշումներ» գիրքերը հաւաքելու

որոշում ունին, սակայն գրաւած են այլ գիրքեր եւս:

Հրատարակչատան աշխատակից Մեհմէտ Ալի Վարըշ ձեռքաւարտուած է, ապա աւելի ուշ ազատ արձակուած:

«Պէլլէ» հրատարակչատունը յայտնի է Հայոց ցեղասպանութեան ու հայկական հարցի վերաբերեալ քանի մը տասնեակ գիրքերու տպագրութեամբ: Անոր հիմնադիր Ջարաքուլուն բազմիցս այցելած է Հայաստան, ան դատապարտած է հայերու դէմ իրականացուած ցեղասպանութիւնը՝ կոչ ընելով թրքական պետութեան եւս առեւտուի իրականութեան հետ: Ներկայիս Ջարաքուլուն որպէս վտարանդի կը բնակի Եւրոպայի մէջ:

Պաքուի Մէջ Ձերբակալուած Է Հայաստանի Յատուկ Ծառայութիւններուն Հետ Համագործակցող Խումբ

Ատրպէյճանի յատուկ ծառայութիւնները ձերբակալած են գինծառայողներ եւ քաղաքացիական անձանց խումբ, որոնք կը մեղադրուին Հայաստանի գաղտնի ծառայութիւններու հետ գաղտնի համագործակցութեան մէջ: Այդ մասին նշուած է 7 մայիսին Ատրպէյճանի գլխաւոր դատախազութեան, պաշտպանութեան նախարարութեան, ներքին գործերու նախարարութիւններու եւ ազգային անվտանգութեան ծառայութեան համատեղ յայտարարութեան մէջ՝ կը փոխանցէ TASS գործակալութիւնը: Ինչպէս նշուած է՝ միջոցներու արդիւնքով, որոնք ձեռնարկուած են Ատրպէյճանի ՊՆ եւ Թերթերու՝ բնակավայրերու դէմ Հայաստանի յատուկ ծառայութիւններու մարմիններու կողմէ պատրաստուող լայն-

նածաւալ սադրանքներու մասին տուեալներու վրայ, պարզուած է, որ գինծառայողներու եւ քաղաքացիական անձանց խումբը ներգրաւուած եղած է հակառակորդի հետախուզութեան հետ համագործակցութեան եւ տարբեր ժամանակներու ընթացքին անոր տրամադրած է տեղեկութիւններ, որոնք ռազմական գաղտնիք են:


Յայտարարութեան մէջ նաեւ ըսուած է, որ «անհետաձգելի քննչական գործողութիւններու արդիւնքով կանխուած է Պաքուի հանրային վայրերու մէջ ահաբեկչական գործողութիւնը»:

Ատրպէյճանի գինուորական դատախազութեան մէջ քրէական գործ յարուցուած է: Անոնց դէմ խափանման միջոց ընտրուած է կալանաւորումը»:

Subscription form for MASSIS Weekly. Includes fields for Name and Address, and pricing for USA, Canada, and Overseas.



### Ժողովրդագրական Աղետի Նշանները Երթալով Աւելի Ցայտուն Կը Դառնան



### ՀԱՅԿ ԳԵՈՐԳԵԱՆ

Այս տարուայ առաջին երեք ամիսներուն Հայաստանի մէջ արձանագրուած ժողովրդագրական հիմնական ցուցանիշները ուղղակի սահմակեցուցիչ են: Անոնք ուղղակիօրէն կը շօշափեն մեր երկրի հեռանկարի եւ անվտանգութեան հարցերը:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայութեան հրատարակած այս տարուայ առաջին եռամսեակի հիմնական ընկերային- տնտեսական ցուցանիշներու՝ ժողովրդագրութեան վերաբերող պաշտօնական տուեալներով, Հայաստանի մէջ ծնունդներու թիւը անցած տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ կտրուկ նուազած է (գծ. 1): Եթէ անցած տարուայ առաջին եռամսեակի ընթացքին Հայաստանի մէջ ծնած էր 9 հազար 125 երեխայ, ապա այս տարի՝ ընդամէնը 8 հազար 534: 2011 թուականի առաջին երեք ամիսներուն ծնածներու թիւը կ'անցնէր 10 հազարը: Փաստօրէն ծնունդներու թիւը այս 7 տարիներու ընթացքին նուազած է մօտ 16 տոկոսով:

Նոյնքան կտրուկ աճած է մահերու թիւը (գծ. 2): Անցած տարի առաջին եռամսեակի ընթացքին Հայաստանի մէջ արձանագրուած է 8 հազար 37 մահ: Վերջին 7 տարիներուն աւելի շատ մահեր արձանագրուած են 2014 թուականին:

Զուտ ժողովրդագրական տեսանկիւնէ ամենակարեւոր ցուցանիշը թերեւս բնական յաւելածն է՝ ծնածներու եւ մահացածներու թիւերու տարբերութիւնը (գծ. 3):

Ահա այս ցուցանիշն է, որ ամենասարսափելին է: Ծնածներու եւ մահացածներու թիւերու տարբերութիւնը այս տարուան առաջին եռամսեակին մէջ եղած է 497: Այս մօտ երեք անգամ քիչ է անցած տարուայ ցուցանիշէն: Դժուար է գտնել բնական յաւելածի ընթացքի՝ մէկ տարուայ ընթացքին արձանագրուած նման կտրուկ անկում անցած 20-25 տարիներուն: Իսկ ամենասարսափելին այն է, որ, ինչպէս պարզ կ'երեւի գծապատկեր 3-ին մէջ, բնական յաւելածի ընթացքի անկումը կ'արձանագրուի արդէն 5-րդ տարին անընդմէջ:

Այսպիսի կայուն միտումը ցոյց կու տայ, որ գործ ունինք ոչ թէ կարճաժամկէտ երեւոյթի հետ, որ ինչ-որ գործօններու ազդեցութեան տակ կրնայ յաջորդ տարի փոփոխուիլ, այլ արմատական բնույթի գործընթացի: Ըստածի ապացոյցն է մէկ այլ ցուցանիշ՝ ամուսնութիւններու թիւի փոփոխութիւնը (գծ. 4): Այս տարուայ առաջին եռամսեակին ընթացքին արձանագրուած է 3 հազար 544 ամուսնութիւն այն պարագային, երբ, օրինակ, 4 տարի առաջ այդ թիւը 4 հազար 744 էր:

Այս աղետալի միտումները հնարաւորինս արագ կանխելու միակ տարբերակը զանգուածային ներգաղթն է, որն ալ կրնայ պայմանաւորուած ըլլալ միայն տնտեսութեան մէջ արագ եւ արմատական բարեփոխումներով: Սակայն քաղաքական գործընթացները ցոյց կու տան, որ նման փոփոխութիւններու հեռանկարները գոնէ առայժմ կը բացակային:

### ԱՄՆ Ափսոսանք կը Ցայտնէ Երեւանի մէջ ԵԱՀԿ Գրասենեակի Փակման Կապակցութեամբ

Միացեալ Նահանգները ափսոսանք կը յայտնէ Երեւանի մէջ ԵԱՀԿ գրասենեակի մօտալուտ փակման կապակցութեամբ, յայտարարած է ԵԱՀԿ Մշտական խորհուրդի մէջ ԱՄՆ գործերու հաւատարմատար Քէյթ Պայրընը:

«Կը ցաւինք, որ կը փակուի Հարաւային Կովկասի մէջ ԵԱՀԿ վերջին գրասենեակը: Այդ գրասենեակները անգնահատելի աջակցութիւն կը ցուցաբերեն այն երկիրներուն, ուր կը գտնուին՝ օգնելով ամբարպնդել նուիրուածութիւնը ԵԱՀԿ սկզբունքներուն եւ յանձնարարութիւններուն, ապահովելով վաղ նախազգուշացում եւ ճշմարտամբողջ կառավարում, իրախուսելով երկխօսութիւն կառավարութեան եւ քաղաքացիական հասարակու-

թեան միջեւ», - ըստած է յայտարարութեան մէջ, որ տեղադրուած է ԵԱՀԿ-ի կայքին մէջ:

«Մենք բարձր կը գնահատենք ԵԱՀԿ-ի գերմանական եւ աւստրիական նախագահութիւններու վճռական ջանքերը՝ Երեւանի մէջ ԵԱՀԿ գրասենեակի մանդատի երկարաձգման շուրջ ստեղծուած փակուղիէն դուրս գալու ուղղութեամբ: Կ'ափսոսանք, որ Ատրպէյճանը հրաժարեցաւ համաձայնիլ մանդատի երկարաձգման, քանի դեռ Գրասենեակը կը շարունակէ իր մարդասիրական ականագերծման հետ կապուած գործունէութիւնը: Հայաստանը, հաւատարիմ մնալով փորձամշակման թեան ոգիին, համաձայնեցաւ Գրասենեակի այդօրինակ գործունէութեան դադրեցման: Հակառակ նա-

### Թաներ Աքչամի Հրապարակած Նոր Փաստաթուղթը «Հայերը Իրենց Տունները Թաքցնողները Կախաղան Պիտի Հանուին»



Թուրք պատմաբան Թաներ Աքչամ Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ նոր աղմկայարոյց արխիւային փաստաթուղթ մը բացայայտած է, որ հրապարակուած է Պոլսոյ «Ակօս» թերթին մէջ: Թաներ Աքչամի ներկայացուցած արխիւային փաստաթուղթը գրուած է թրքական բանակի հրամանատարներէն Մահմուդ Քեամիլ փաշայի կողմէ եւ կը կրէ երկրի ներքին գործոց նախարարութեան կնիքը:

1915-ի Յուլիս 24-ին գրուած հեռագիրը քննուած է 1919-1921-ին «Իթիհատ վէ թերաքի»-ի պարագլուխներուն՝ Պոլսոյ մէջ կայացած դատավարութիւններու ընթացքին: Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան կոտորածներուն վերաբերեալ գործի մեղադրական գործի թղթապանակներուն մէջ տեղ գտած հեռագիրով Մահմուդ Քեամիլ փաշան զգուշացում մը կը յղէ Օսմանեան կայսրութեան տարբեր շրջաններու տեղական ինքնակառավարման մարմիններուն, որ իրենց տուններուն մէջ հայեր թաքցնող մահմետականները նոյնպէս պիտի պատժուին:

Հայերուն օգնող մահմետականներուն իրենց տան դիմաց կախաղանով սպառնացող Մահմուդ փաշան կը պահանջէ տեղական ինքնակառավարման մարմիններէն իրավիճակը պահել ուշադրութեան կեդրոնին:

Հեռագրին ամբողջական թարգմանութիւնը «Թերթգամ»-ը կը ներկայացնէ ստորեւ.

«Մենք պարզած ենք, որ որոշ գիւղերու եւ աւաններու մէջ մահմետականները կը թաքցնեն հայերը: Կառավարութեան որոշումներուն դէմ երթալով հայերը իրենց տուններուն մէջ պահողներուն տունները պէտք է աւերել, իսկ իրենց կախաղան բարձրացնել նոյն իրենց տան դիմաց: Կատարեցէք կարգադրութիւնները, եւ տեղահանութեան դատապարտուած գէթ մէկ հայ տեղը չմնալու խնդիրը կատարելուն պէս տեղեկացուցէք մեզ: Կրօնափոխուելով մահմետականա-

ցած հայերը նոյնպէս պէտք է տեղահանուին: Եթէ զանոնք պատապարողները զինուած ուժերու ներկայացուցիչներ են՝ զինուորական ծառայութեան հետ անոնց կապերը պիտի խզուին, իսկ եթէ ղեկավար պաշտօնի զինուորականներ են՝ պիտի զրկուին պաշտօնէ եւ պիտի կանգնին ռազմական դատարանի առջեւ»:

Օսմաներէնով գրուած հեռագիրը տառադարձուած եղած է նաեւ հայատառ թրքերէնով:

Մահմուդ փաշան թեմային վերաբերեալ հեռագիր մը յղած է արդէն աւելի ուշ՝ նոյն թուականի Օգոստոս 1-ին եւ որոշակի յաւելումներ կատարել նախորդ հրամանին վերաբերեալ:

Երկրորդ հեռագրին մէջ հրամանատարը կ'ընդգծէ, որ կարգադրութիւնը պէտք է վերաբերի պետութեան անմիջական հսկողութեամբ մահմետական ընտանիքներուն բաժնուած հայ կանանց եւ որբերուն իրենց տունները պահողներուն: Նամակին վերջաւորութեան Մահմուդ Քեամիլ կրկին կ'աւելցնէ. «Որ կրօնէ կամ ազգութենէն ալ ըլլան՝ հայերը թաքցնողները պէտք է մահապատժի արժանանան»:

Յիշեցնենք, որ օրեր առաջ պատմաբան Թաներ Աքչամ եւ մէկ կարեւոր փաստաթուղթ հրապարակած էր Հայոց Յեղասպանութեան ժամանակ «Իթիհատ վէ թերաքի»-ի անդամներուն վարած քաղաքականութեան վերաբերեալ:

1915-ի Յուլիս 4-ին յղուած է իւրաքանչիւր (Նարբերը) նահանգապետ Սաբիթ պէյին՝ «Իթիհատ վէ թերաքի»-ի իւրաքանչիւր ներկայացուցիչ Նազըմ պէյին փոխանցելու խնդրանքով: Հեռագրին մէջ հարցում յղուած էր տարածքէն տեղահանուող հայերուն մասին:

«Այդ վնասակար տարրերը միայն կը տեղահանուին, թէ՛ նաեւ կ'ոչնչացուին, կը խնդրենք բացայայտօրէն տեղեկացուցէք մեզ, եղբայր», - կ'ըսուի երիտթուրք պաշտօնեաներէն Պահաթ թիւն Շաքիրի կողմէ գրուած նամակին մէջ:

Խաղաղութեան՝ ամիսներ շարունակ գործադրած ջանքերուն, հնարաւոր չեղաւ հասնիլ այնպիսի ձեւակերպման, որ բաւարարէր բոլոր անդամ երկիրներուն եւ թոյլ տար ընդունիլ մանդատի երկարաձգման մասին Մշտական խորհուրդի որոշումը, - յիշեցուցած է ԵԱՀԿ-ի մէջ ԱՄՆ առաքելութիւնը:

«Մենք կ'ոչ կ'ընենք Նախա-

գահութեան եւ Գլխաւոր քարտուղարին՝ նոր ուղիներ փնտնել Հայաստանի եւ Հարաւային Կովկասի մէջ ԵԱՀԿ ներկայութիւնը պահպանելու համար», - ըստած է յայտարարութեան մէջ:

Միացեալ Նահանգները նաեւ շնորհակալութիւն յայտնած է Հայաստանի մէջ ԵԱՀԿ դեսպան Աւաքովին եւ անոր աշխատակազմին:



# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԻ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Մայիսի 7-ին Մայր Աթոռի Միաձնաէջ Ս. Տաճարում մատուցված Սուրբ Պատարագի ընթացքում հրապարակուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապետի Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը Յաղթանակի եւ խաղաղութեան օրուայ, Շուշիի ազատագրութեան եւ Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան բանակի 25-րդ տարեդարձի առիթով:

Հայրապետական Սրբատառ կոնդակում ասուած է.  
«ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՅ  
ԱՐԱՐԱՏԵԱՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՈՂՁՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ՏԱԿԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ  
ՀԱՅՈՑ

ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ,  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅ  
ՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԿԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՄՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,  
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷՒՅ, ՉՕՐԱՎԱՐԱՅ  
ԵՒ ՉՕՐԱՅ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՅԵԱԼ  
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Թող պարծենան Քեզանով Քո անունը սիրողները,  
քանզի Դու պիտի օրհնես արդարին.  
Տէր, Քո սպառազինութեամբ պաշտպանեցիր մեզ»

(Սաղ. Ե 12-13):

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սաղմոսերգուի այս փառաբանութեամբ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում համայն մեր ժողովրդին Յաղթանակի եւ խաղաղութեան օրուայ, Շուշիի ազատագրութեան եւ Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան բանակի 25-րդ տարեդարձի առիթով: Ողջուն ենք յղում Արցախի պետական այրերին, Պաշտպանութեան բանակի հրամանատարներին ու մարտիկներին եւ Արցախի հերոսական մեր ժողովրդին:

Շուշիի ազատագրութեան լուսաւոր օրը մեր ժողովուրդը ապրեց լիառատ ուրախութիւն՝ ամրանալով հաւատքի, հայրենեաց սիրոյ եւ անվարան կամքի մէջ՝ յաղթական աւարտի հասցնելու Արցախի ազատագրական պայքարը: Ազատութիւնը, արդարութիւնը, խաղաղութիւնը նուիրական արժէքներ են քրիստոնեական կեանքում, որոնք վառ մնացին մեր ժողովրդի հոգում՝ հակառակ դարերով ապրած փորձութիւնների եւ մաքառումով գրուած մեր պատմութեան: Արցախեան ազատամարտում նոյնպէս մեր ժողովուրդը յանձն առաւ բազում զոհողութիւններ ու դիմակայեց բազում նեղութիւնների, հաւատով, որ Աստուած պիտի օրհնի իր արդար պայքարը: Մարտերի մէջ կազմաւորուեց, ամրացաւ ու զօրացաւ Արցախի Պաշտպանութեան բանակը, որն այսօր երաշխաւորն է Արցախի պետականութեան եւ ժողովրդի խաղաղ կեանքի:

Պայքարը Արցախի ազատութեան համար, որ արեւելեան մի փոքր տարածքն է պատմական մեր հայրենիքի, զօրացրեց սրտերը, համախմբեց ուժերը աշխարհասփիւռ մեր ժողովրդի զաւակների, ովքեր ոչինչ չխնայեցին Արցախի համար: Անկախ պետականութեան հաստատումից ի վեր ակնատես ենք, թէ ինչպէս Արցախի ստեղծարար ու արի մեր ժողովուրդը ունենալով աջակցութիւնը Հայաստանի եւ Սփիւռքի, կառուցում է իր ազատ կեանքը եւ շէնացնում իր երկիրը: Կառուցապատում եւ շէնանում է նաեւ Շուշին՝ պատմական ծաղկուն քաղաքն Արցախի: Բարձրանում են եկեղեցիները, դարաւոր վանքերն ու սրբատեղիները: Մեր ժողովուրդը նորոգում է քրիստոնեական իր կեանքը եւ հաւատով, որ Տէրն օրհնում է արդարին՝ ջանքեր է գործադրում հայրենի երկրի բարօրութեան եւ իր խաղաղ կեանքի ապահովման համար: Ամեն օր մեր զաւակները հետ են մղում սահմանային ոտնձգութիւններն ու սաղրանքները եւ անառիկ պահում հայրենիքի պաշտպանութեան դիրքերը: Այս պանծալի օրը, երբ անդրադառնում ենք Պաշտպանութեան բանակի յաղթանակներին, հերոս մեր զաւակների սխրանքներին, Արցա-

խի ազատ ու խաղաղ կեանքի ձեռքբերումներին, սաղմոսերգուի հետ փառաբանում ենք Աստծուն. «Տէր, Քո սպառազինութեամբ պաշտպանեցիր մեզ»:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Տիրոջ պարգեւած հոգեւոր սպառազինութիւնը մեր հոգիները զօրացնող հաւատքն է, մեզ շնորհուած Սուրբ Աւետարանը, մեր սէրը միմեանց հանդէպ, մեր նուիրումը մեր հայրենիքին ու ժողովրդին, մեր հոգեւոր ազնուութիւնը, ձգտումը խաղաղութեան ու արդարութեան, որոնք առաջնորդում են մեզ արժանաւոր կեանքի ու գործերի: Այդ հոգեւոր ներուժով եւ արժէքներով են կերտուել մեր յաղթանակներն ու ձեռքբերումները, որոնք պարտաւոր ենք պահպանել ու բազմապատկել:

Մայիսի 9-ի այս տօնական օրը յիշենք հայազգի, նաեւ Արցախի զաւակ փառապան զօրավարներին ու զինուորներին, ովքեր Երկրորդ աշխարհամարտում նպաստ բերեցին յաղթանակի կերտման եւ խաղաղութեան հաստատման գործին: Աղօթքով յիշենք Արցախի ազատագրութեան եւ խաղաղ կեանքի համար զոհուած մեր ժողովրդի քաջարի զաւակներին, որոնց անունները պիտի ապրեն սերնդէ սերունդ:

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Արցախի սիրելի մեր ժողովրդին, բարեխնամ իշխանութիւններին՝ Նախագահ Բակո Սահակեանի գլխաւորութեամբ, Արցախի թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանին եւ ուխտապահ հոգեւոր դասին ու բանակում ծառայող մեր եկեղեցու հոգեւոր սպասաւորներին՝ առաջնորդութեամբ Գերաշնորհ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանի: Հայրական սիրով Մեր գնահատանքն ենք բերում Արցախի Պաշտպանութեան Նախարար եւ բանակի գլխաւոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականեանին, բոլոր զօրահրամանատարներին ու զինուորներին, ովքեր մշտարթուն ծառայութեամբ պահպանում են մեր ժողովրդի խաղաղ կեանքը: Յորդոր ենք բերում, որ գօտեպնդուէք ամուր հաւատքով, արիւթեամբ, լաւատեսութեամբ: Ունենք գլխաւորը՝ հայրենի անկախ պետականութիւնը, եւ այն, ինչ պատմութիւնը յաճախ մերժել է մեզ՝ խաղաղութիւն, կեանքի ապահովութիւն ու ինդուլթիւն, մեր հոգում պիտի բարի արդիւնքներ տան՝ յանուն մեր զաւակների եւ մեր ժողովրդի լուսաւոր ապագայի: Արդ, ապրենք ու գործենք մեր հայրենիքը շէնացնելու, մեր բանակը զօրացնելու, ազգային գարթօնքի մեր իղձերը մարմնաւորելու ջանք ու եռանդով, յաղթանակի առաջնորդելով նաեւ Արցախի Հանրապետութեան ճանաչումը:

Այս յիշարժան օրը, սիրելիներ, Արցախի Պաշտպանութեան բանակին ենք շնորհում խաչված՝ պատկերով Սուրբ Գրիգորիս Պարթեւ արքեպիսկոպոսի: Նա շնորհաշատ ու քաջահոգի թրոն էր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի եւ շատ երիտասարդ հասակում առաջնորդութեան կոչուեց Արցախում ու յարակից շրջաններում եւ իր առաքելութեան մէջ նահատակուեց անհաւատներից: Աշակերտները նրան հողին յանձնեցին Արցախում, եւ նրա գերեզմանին կառուցուեց Ամարասի վանքը, որը մեր ժողովրդի համար նուիրական սրբավայր է եւ ուխտատեղի:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Քրիստոսի նահատակ վկայ Սուրբ Գրիգորիսի բարեխօսութեամբ Տէրը խաղաղութիւն պարգեւի Արցախ աշխարհին, ոգով արի, բազկով անյաղթ պահպանի Արցախի Պաշտպանութեան բանակը եւ բոլոր զօրահրամանատարներին ու զինուորներին անփորձանք պահի իրենց պանծալի ծառայութեան մէջ: Աղօթք ենք բարձրացնում, որ Աստուած իր Սուրբ Աջի հովանու ներքոյ խաղաղ պահի համայն մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի եւ պահպանի ամուր հաւատքով, սիրով ու միասնական՝ կերտելու բարօրութիւնը հայրենի երկրի, իրագործելու ազգային իղձերը եւ միշտ օրհնեք գելու՝ «Տէր, Քո սպառազինութեամբ պաշտպանեցիր մեզ. Թող պարծենան Քեզանով Քո անունը սիրողները, քանզի Դու պիտի օրհնես արդարին»:

Օրհնութեամբ՝  
ԳԱՐԵԳԻՆ Բ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
Տուաւ Կոնդակս ի 7-ն Մայիսի  
յամի Տեառն 2017 եւ ի թուին հայոց ՌՆԿԶ  
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի  
ընդ համարաւ 1006»:

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---



**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

*Coverage & Protection should be on the top of your priority list.*



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



### ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՊԵՊՕ ՍԻՍՈՆԵԱՆԻ

Կազմակերպութեամբ Նոր Սեբեռուհ Մշակութային եւ Սահակեան Սանուց Միութիւններու, Հինգշաբթի, Մայիս 4, 2017-ին, ՀԿԲՄ-ի Կարօ Սողանալեան սրահէն ներս տեղի ունեցաւ յիշատակի երեկոյի հանդիսութիւն մը, նուիրուած ՆՍՄՄ-ի հիմնադիրներէն եւ Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գոլէճի երկարամեայ տնօրէններէն, բանաստեղծ, մանկավարժ, գրականագէտ, մշակութային եւ հանրային գործիչ՝ Պէպօ Սիմոնեանի ծննդեան 80-ամեակին եւ բեղուն վաստակին:

Պէպօ Սիմոնեանի անձին ու վաստակին ծանօթ ընտրանի հասարակութիւն մը փութացած էր սրահ: Ներկաներուն մէջ կը նշմարուէին Սան Տիեկոյի Հայց. Եկեղեցւոյ երկարամեայ հովիւ Արժ. Տ. Տաթեւ Աւ. Քհնյ. եւ երէցկիւն Արաքսի Թաթուլեան, Ս.Բ.Հ.Կ. Կեդր. վարչութեան ատենապետ Համբիկ Սարաֆեան, Արեւմեան Ամերիկայի Ս.Բ.Հ.Կ. վարիչ Մարմնի ատենապետ Գրիգոր Խոտանեան, ինչպէս նաեւ կեդրոնի եւ շրջանային այլ ղեկավարներ, գրողներ, մտաւորականներ, նախկին պաշտօնակիցներ եւ սաներ:

Երեկոյի հանդիսավար Յարութ Տէր Դաւիթեան, զոյգ միութեանց անուններով ողջունելէ ետք ներկաները, զանոնք հրաւիրեց յոտնկայս կատարելու Սահակեանի քայլերգը, առաջնորդութեամբ Տիկ. Լենա Թաշճեան-Մանուկեանի:



Յարութ Տէր Դաւիթեան

Ապա, ընթերցեց ողջոյնի գերեր, ուղարկուած Պէպօ Սիմոնեանի կողակիցին՝ Տիկ. Ազատուհի Սիմոնեանի եւ իրենց զաւակներուն եւ ընտանիքներուն կողմէ, Լիբանանահայ Գրողներու համախմբումի, գրականագէտ Երուանդ Տէր Խաչատուրեանի եւ Աւստրալիոյ Սիտնի քաղաքի ՆՍՄՄ-ի վարչութեան կողմէ: Իր բացման խօսքով, ան պատմեց երկու գուարճալի յուշեր, նախակրթարանի վեցերորդ կարգի իր դասապահներէն, երբ Պրն. Պէպօ Սիմոնեանը ունեցած էին որպէս հայերէնի ուսուցիչ:

Ընթացք տալով օրուան յայտագրի գեղարուեստական բաժնի առաջին ելոյթին, ան հրաւիրեց Տիկ. Լենա Թաշճեան-Մանուկեանը ընթերցելու հատածներ Պէպօ Սիմոնեանի խոհեր-մտածումներէն՝ «Մարդը, Մեծ Մարդը եւ Ուրիշ Մարդեր», ինչպէս նաեւ ասմունքելու անոր «Մուկ Խորան» բանաստեղծութիւնը, որոնք բարձրորակ կատարուած շատ տպաւորիչ էր:

Հանդիսութեան առաջին գեկուցաբերն էր Ս.Բ.Հ.Կ-ի վարիչ



Յիրաւի բախտաւոր եղաւ Պէպօ Սիմոնեան, քանի որ արժանացաւ արդար շքանշաններու եւ զնահատանքի: Կ'ուզեմ նշել անոնցմէ քանի մը հատը.

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Մերոպ Մաշտոց» շքանշանը, ձեռամբ Արամ Ա. Վեհափառին:



Գաբրիէլ Մոլոյեան

Լիբանանի Կրթական Նախարարութեան շքանշանը ձեռամբ Երեսփոխան Սեպուհ Գալբաքեանի:

Հայաստանի Մշակոյթի նախարարութեան «Մովսէս Խորենացի» շքանշանը, ձեռամբ Լիբանանի

### ՈՂՋՈՅՆԻ ԳԻՐԵՐ

Սիմոնեան Գալաթեան ընտանիքի անդամներու համար մեծ ուրախութիւն էր իմանալ որ դուք ազնիւ մտածուած ունեցած էք կազմակերպելու հանդիսութիւն մը մեծարելու համար Պէպօ Սիմոնեանի ծննդեան 80-ամեակը եւ անոր գրական, մշակութային, կրթական եւ հասարակական բեղուն վաստակը: Նոր Սեբեռուհ Մշակութային միութեան հիմնադիրի եւ տարիներու անձնուէր ծառայութեան նուիրուած գլխաւոր դերակատարի իր հանգամանքով ինչպէս նաեւ Սահակեան վարժարանի երկարամեայ ուսուցիչի ու Սահակեան Լեւոն Մկրտիչեան գոլէճի տնօրէնի ու կրթական առաքելութեան նուիրուած Պէպօ Սիմոնեանին համար արդար գնահատութիւնը պիտի գար այս զոյգ կազմակերպութիւններէն:

Անկախաբար իր մշակութային, կրթական ու հասարակական գործունէութենէն Պէպօ Սիմոնեանի գրական բանաստեղծական արձակ եւ քննադատական երկերուն ընդմէջէն ինչպէս նաեւ հրապարագրական անթիւ ու անհամար յօդուածներու լոյս ընծայումով կարելի պիտի ըլլայ համապարփակ արժեւորումը կատարել իր ձգած վաստակին: Յետ մահու հրատարակուած «Գմբէթ Արէզ» բանաստեղծական հատորն ու «Գրականութեան ճամբուն վրայ» գրականագիտական հատորն իր ձաշակ մը կու տան այն պատկառելի գործին մասին որ տակաւին կը սպասէ հրատարակութեան:

Այս առթիւ կու գանք արտայայտել մեր շնորհակալութիւնները այսօրուան հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն, օրուան հանդիսավար Տիար Յարութ Տէր Դաւիթեանին բանախօսներ Տօքթօր Արշակ Գազանճեանին եւ Տիար Գաբրիէլ Մոլոյեանին, ասմունքով յայտագրին իր բաժինը բերած Պէպօ Սիմոնեանի ուսանողուհի Լենա Թաշճեան Մանուկեանին եւ սրտի խօսքով հանդէս եկած բարեկամներուն եւ ընկերներուն:

Ազատուհի Սիմոնեան Տիգրան, Սիլվի, Արեգ, Սարիկ Ռագմիկ, Հերա, Հրակ-Պէպօ Գալաթեաններ

\*\*\*\*\*

Յարգելի Ընկերներ եւ Ընկերուհիներ, Նոր Սեբեռուհ Մշակութային Միութեան Սիտնի Մասնաճիւղը հեռաւոր Աւստրալիոյ ափերէն կը ողջունէ միութեան հիմնադիր ընկերներէն ինչպէս նաեւ մանկավարժ, բանաստեղծ ու ազգային-հասարակական գործիչ՝ Ընկեր Պէպօ Սիմոնեանի ծննդեան 80-ամեակին նուիրուած «Յիշատակի Երեկոն»:

Ընկեր Պէպօ Սիմոնեանը իր բովանդակ կեանքը նուիրած էր հայ ժողովուրդին, հայ մանուկին, հայ գիրին եւ մամուլին եւ իր գաղափարական կեցուածքով օրինակ ծառայեց իր շուրջիներուն: Ուրեմն, բնաւ պատահական չէ որ 1954 թուականին, ան խումբ մը մշակութասէր ընկերներու կողքին իր մասնակցութիւնը բերաւ Նոր Սեբեռուհ Մշակութային Միութեան հիմնադրութեան աշխատանքներուն:

Միութիւնը ճիւղաւորուեցաւ, ուժացաւ եւ այժմ իր տասնամեակներու վաստակով իր պատուաբեր տեղն ու դերը ունի հայ կեանքէն ներս:

Ընկեր Պէպօ Սիմոնեան կ'ապրէր ու կը շնչէր հայ մշակոյթով: Իր բեղուն գործունէութիւնը անմահացուցած է գինք, ու ոչ թէ միայն յուշ երեկոյ մը այլ երեկոններու երկար շարք մը կարելի է իրականացնել, որովհետեւ ան կ'ապրի իր բանաստեղծական եւ գրական ստեղծագործութիւններով, իր հեզահամբոյր նկարագիրով, կուսակցական անյողդողդ ազգասիրութեամբ եւ աներեր հայրենասիրութեամբ:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝ Ն.Ս.Մ.Ս.

Սիտնի, Աւստրալիա

\*\*\*\*\*

Ողջոյն Ձեզ սիրելի Նոր Սեբեռուհականներ, Ողջոյն Ձեզ սիրելի Հայրենակիցներ, Նոր Սեբեռուհ Մշակութային Միութեան վարչութիւնը սրտանց կ'ողջունէ ձեր յիշատակի երեկոն նուիրուած անբասիր գաղափարականին, անդուլ հասարակական գործիչին, նուիրեալ կրթական մշակին, տաղանդաւոր բանաստեղծին ու մտաւորականին, Ն.Ս.Մ.Ս.-ի հիմնադիր տիտաններէն՝ Պէպօ Սիմոնեանին: Առ այդ, անգամ մը եւս կու գանք մեր յարգանքի տուրքն ու երախտագիտութիւնը մատուցելու յարգելի ընկերձ անթառամ յիշատակին:

Ասկէ երկու տարիներ առաջ, լիբանանահայ գաղութը խորապէս սգաց երբ շիջեցաւ ու մեզմէ առ յաւիտ բաժնուեցաւ գաղութիս ականաւոր դէմքերէն ընկեր Պէպօ Սիմոնեանը: Այդ սգաց, որովհետեւ կորսնցուց Պէպօ Սիմոնեան մարդն ու մշակոյթի անխոնջ սպասարկուն, որովհետեւ ան իր մահով մեծ բաց մը թողուց ազգային, կրթական ու մշակութային ոլորտներէն ներս: Սակայն, իր մանկավարժ-դաստիարակին շունչին ներքեւ հասակ առած սերունդներուն համար անոր յիշատակը անմար պիտի մնայ անոնց մտքին ու հոգիին մէջ:

Պէյրուկի Ն.Ս.Մ.Ս.-ի վարչութիւնը բարձր կը գնահատէ ձեր այս նախաձեռնութիւնը, որ կը միտի մեծարել ընկ. Պէպօ Սիմոնեանը ըստ իր արժանուցին:

Բիւր յարգանք ընկ. Պէպօյին, Բարի երթ Ձեզի սիրելի ընկերներ Պէյրուկի Ն.Ս.Մ.Ս.-ի վարչութիւն

\*\*\*\*\*

Պէպօ Սիմոնեանի հայրենի գրագէտ բարեկամներու անունով ողջունում եմ բանաստեղծ, արձակագիր, գրաքննադատ Պէպօ Սիմոնեանի ծննդեան 80-ամեակը: Պէպօ Սիմոնեան եղել է գրականութեան նուիրեալ ու արդար մշակ եւ ստեղծել է ազնիւ ու բարձր



### ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ

#### ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՏԵԱՆ

Իր մտաւորական ու մշակութային արժանիքները բնութագրող բանաստեղծական եւ արձակ ստեղծագործական, գրաքննադատական, տեսական, հրապարակագրական, գրախօսական, մանկավարժական, ազգային եւ հայրենասիրական թեմաներով՝ իր լոյս ընծայած լրիւ գործերու մանրամասն վերլուծումը կատարելը չէ մեր նպատակը: Պէպօ Սիմոնեանին 80-ամեակի նուիրուած այսօրուան սահմանափակ երեկոյին՝ պիտի բաւարարուինք, ըստ կարելիութեան, ժամանակագրական կարգով ներկայացնել իր հեղինակած գործերը, որոնք կամրագրեն իր մտաւորական եւ մշակութի գործիչի բարձրորոշ կարողութիւնները:

### Սփիւռքահայ Ներդրողներու Արտադրանքներու Ցուցահանդէս-Վաճառք Երեւանի մէջ



Մայիս 5-ին Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ, Երեւանի քաղաքապետարանին եւ Հայաստանի զարգացման հիմնադրամին աջակցութեամբ «Երեւան էքսպօ» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի մէջ արդիւնաբերութեան ոլորտին մէջ սփիւռքահայ ներդրողներու արտադրանքներու ցուցահանդէս-վաճառքի բացումը:

Ցուցահանդէս-վաճառքի բացման ներկայ էր ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը:

Նախարարը շրջեցաւ տաղաւարներով, ծանօթացաւ արդիւնաբերութեան ոլորտին մէջ սփիւռքահայ ներդրողներու գործունէութեան, հետաքրքրուեցաւ արտադրական գործընթացի նորարարութիւններով եւ խնդիրներով, դիտեց «Աշխարհի կեդրոնէն տիեզերքներէն մէկուն մասնիկը» հայկական առաջին 360 աստիճան ֆիլմը, պատասխանեց լրագրողներու հարցումներուն:

Հրանոյշ Յակոբեան մասնաւորապէս նշեց. «Պատրաստուած է Հայաստանում» ապրանքանիշը կրող արտադրանքները միջազգային շուկայում գնալով դառնում են աւելի ընդունուած, պահանջուած եւ տարածուած: Նման ցուցահանդէսներով մենք պէտք է խրախուսենք սփիւռքահայ ներդրողներին եւ աշխատենք օրինակ վերցնել հայրենադարձուած մեր հայրենակիցներին, ովքեր աշխատանքի եւ արտադրանքի որակի հանդէպ պատասխանատուութեան իւրաքանչեւ մօտեցում ունեն: Այս առումով նրանց արտադրանքները մրցունակ են եւ նորարարական: Հայրենիքում սփիւռքահայ արտադրողների համար պայմաններ

են ստեղծուած, նրանց գործունէութիւնը դիւրացնելու նպատակով որոշակի քայլեր են իրականացուած: Վերջին ժամանակաշրջանում, մասնաւորապէս տնտեսական ոլորտում կառավարութիւնը հարկային արտօնութիւններ է սահմանում սփիւռքահայ ներդրողների եւ արտադրողների համար: Մեր ուշադրութեան կենտրոնում շարունակում են մնալ փոքր եւ միջին ձեռնարկութիւնները, որոնցով յատկապէս զբաղուած են Հայաստանում հաստատուած սուրիահայերը»: Նախարարը նշեց, որ ցուցահանդէս-վաճառքին ներկայ սփիւռքահայ ներդրողները եւ արտադրողները Հայրենիք վերադարձած են տարբեր երկիրներէ՝ ԱՄՆ, Ռուսաստան, Սուրիա, Լիբանան եւ այլն:

Ցուցահանդէսի բացման ընթացքին սուրիահայ գործարար Ալեքսան Գարատանայեան, որ Հայաստանի մէջ հիմնած է «Alexan Art» եւ «Sona Print» ընկերութիւնները, շնորհակալութիւն յայտնեց ՀՀ սփիւռքի նախարարութեան ցուցաբերած աջակցութեան համար: «2012-ի Հոկտեմբեր 24-ին Սփիւռքի նախարարութեան մէջ փոքր եւ միջին գործարարութեան սուրիահայ ներկայացուցիչները հանդիպում ունեցան հայաստանեան գործուածքներու ոլորտի արտադրողներուն հետ: Նախարար Հրանոյշ Յակոբեան ներկայացուց մեզի եւ ամուր գործակցութեան հիմք դրաւ: Մեծ է նախարարութեան դերակատարութիւնը մեր գործարարութեան կայացման գործին մէջ, քանի որ առաջին համագործակցութեան առաջարկները ստացած ենք հենց Սփիւռքի նախարարութեան մէջ», - ըսաւ Ալեքսան Գարատանայեան:

### «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան Նոր Նախագահը կը Ստանձնէ իր Պաշտօնը

3 Մայիս 2017-ին իգապէլ Մոթա իր նոր պաշտօնը ստանձնեց իբրեւ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան նախագահ յառաջիկայ հինգ տարիներուն համար, յաջորդելով Արթուր Սանթոս Միլվային, որ այդ պաշտօնը վարած էր 2012-2017 ժամանակաշրջանին: Տիկին իգապէլ Մոթա՝ հիմնարկութեան հոգաբարձու մարմնի անդամ է 1999-էն ի վեր. նախագահ ընտրուեցաւ միաձայնութեամբ անցեալ 7 Դեկտեմբերին տեղի ունեցած լիազուծար ժողովին:



Իսկ 1987-1995-ին՝ Շրջանային Ծրագրաւորման եւ Զարգացման պետական քարտուղար, պատասխանատու ըլլալով Եւրոպական Միութեան հետ բանակցութիւններու ի նպաստ Փորթուկալի զարգացման ծրագիրներուն:

Մոթա ծնած է Լիզպոն, 1951 ին, եւ Լիզպոնի համալսարանի շրջանաւարտ է՝ տնտեսագէտ մասնագիտութեամբ: 1973-էն ի վեր աշխատանքային ընդարձակ փորձառութիւն ունեցած է՝ պետական, համալսարանական եւ այլ կալուածներու մէջ ղեկավար դիրքեր վարելով: Անոնց շարքին պէտք է չիշել, թէ 1978-1986-ին Ելեւմտից նախարարութեան արտաքին յարաբերութիւններու բաժանմունքի ընդհանուր փոխտնօրէն եղած է,

**OFFICE SPACE FOR RENT  
IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

**1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506**



### ՄԱՅՐ ՍԻՐՈՅ ՏԱԾԱՐ

#### ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Մայրսի տասնընթերցան է այսօր, մայրական սիրոյ լոյսի տօնական հրավառութիւն թող լինի, փանդիւններ թող զարկեն, թող արեգակը երկիր իջնի, մայրերի հրաբորբ ողջոյնը տանի տիեզերքի «Ծիր կաթին» աստղաբոյլի՝ «Վահագն Յարդազողի ձանապարհ»-ի տաճարի Արմինա-Հայաստանի «Ոսկեծին, Ոսկեմայր» Մայր Անահիտ դիցուհուն: Աստղերը մի պահ թող կանգնեն, իրենց լոյսի թրթրուներով ողջոյնեն մոլորակի մայրերին: Այս իրիկուն, արեւի քոյրիկ լուսնեակը իր կաթնաթոյր համբուրը թող շաղի մայրերի ճակատներին: Միշտ գուարթ լոյս թող յորդի Արմինա-Հայերի դրախտիկ աշխարհի մայրերի դէմքերից, իրենց սրտերի բոցալառ ծովակներ ի տիեզերական սէրը գեղի որդիների սրտերին: Մայրերի փառաբանման հրաշափառ տօնախմբութիւն թող լինի այսօր, նրանց սիրոյ, գուրգուրանքի տիեզերական խորհուրդի պատարագ լինի: Արմինա-Հայաստանի մարդկանց օճախները թող միշտ հրդեհուեն մայրական սիրոյ հրճուանքի բոցերով: Արմինա-Հայերի արի նախնիները աստուածացրել են մայրերին, պաշտամունք է եղել այն, նրանց պատուին տաճարներ են պատել: Մայրը բնութեան ծաղկման պաշտամունքն է, մայրը «Աստուածածին» եղաւ, որ մարդկանց սրտերին սիրոյ ու խաղաղութեան լոյսի շահեր վառուէին:

Այսօր, երկրի ծիածանափայլ հրաշալոյս ծաղիկները մայրերի լանջերը թող գգուեն: Միրոյ բոցերով վառուող վարդերը ծիածան փունի իրենց օճախներում, նրանց կարմիր կրակ բոցերը խայտան նրանց դէմքերին, մայրական քնքուշ ժպիտ հոսեն նրանց ակներին: Մայրական ժպիտ . . . Աստղիկ դիցուհու ձնծաղիկի հազար գոյներ լոյսն է այն: Վարդ, ծաղիկների թագուհի, ծաղիկը բնութեան արարչութեան սքանչանքն է, նրա տեսքից հոգիդ լցուում խինդով, նայի՛ր, նայի՛ր նրան, արեւի լոյսն է այն, արեւի հրաբորբ խինդ պիտի հոսի սրտիդ, հոգուդ տաճարի կանթեղները պիտի վառուեն: Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէսը, վարդատուն էր հիմնել, մինչեւ այսօր էլ Արմինա-Հայ արիասիրտ մարդիկ, արեգակի բոսոր լոյսով վառուած վարդերը վեր պահած, ամեն Մայրսին այցի են գնում Աննայի սիրով յօշոտուած Սաեաթ Նովու գերեզմանին շող տալու:

Մայրսի, գարնան անուշ ամիս, արեգակն է իր տաքուկ շունչը հոսում Արմինա-Հայաստան աշխարհին: Մայր Անահիտ դիցուհին է «Վահագնի Յարդազողի ձանապարհ»-ի տաճարից գալիս Արմինա-Հայաստան, սիրոյ հուր հոսում հայոց աշխարհին, նրա խանդաղատանքից բնութիւնն է ծաղկում, նրա թովչանքից ծառերն են փթթում, փթիթ բողբոջներ պայթում, արեւին են բացուում հազարհազար գոյների ծաղիկներ: Ծաղիկը բնութեան առեղծուածն է, մայրն էլ բնութեան ծաղիկն է, բնութեան յաւերժութեան պատարագն է:

Մայրսի, բնութեան սքանչանքից ծաղկում է մարդու հոգին, ծաղկում են արտերի ցորեանի հասկերը: Մուսա Լեւան լանջերից յառնած հովիկների թեւերին բազմ

մած անցել հայրենի ոսկեշաղ փրփրած արտերով, ծաղկած ցորենի բոցը հոգուս ամբարած՝ հասել Արմինա-Հայաստան աշխարհ: Յորեանի հասկերի ծաղիկ, մայր բնութեան բոցն է այն, ափերով հաւաքել են նրա մանրիկ ծաղիկները՝ տարել մայրիկիս, կարօտել են նրա բոցին . . . : Ծաղկում են այգիները, դափնիները, հրճուել են հովիկներին ելած ծաղկաթերթիկների նազանի պարից, ցատկել բռնել նրանց, հաւաքել կարմիր կապոյտները, տարել «Օշական» Հայերէն լեզուի դասագրքիս էջերում շարել: Այգիները ժպտում են արեւին, մտի՛ր այգիներ, ժպտա՛ նրանց բոսոր տեսքին, այնտեղ իջած արեւն է համբուրում ծաղիկների շրթները: Հայոց աշխարհի լեռների լանջեր, ծառերն իրենց կանաչագարդ թեւերն են երկինք պարզել, երկնի կապոյտը գգուելու: Բնութիւնը՝ Մայր Անահիտ դիցուհու հրաշափառ արարչութիւնն է, հողը բնութեան սրբագործ արարումն է, իր տաքուկ բոցում անուցում բոյսերը, ծառերը: Որպէս մայրութեան սրբազնացում՝ հողը մայրենի ենք կոչում, երկիրը մայր հայրենիք, գետը մայր Արաքս, ծառը մայրի:

Մայրերը, իրենց վեր պահած ձեռքերը սիւն են դարձրել, որ չփլուէին իրենց գաւակների տները: Մայրութեան ինչքան սիրով է լցուած եղել մի իմաստասէրի սիրտը, որ յանդգնել էր ասելու, «Աստուած էլ կը գտնես, սակայն, յաւերժութիւն դարձած մօրը ինչպէս կը գտնես . . . : Աստուածային լեցուն բարութեամբ մայր, ըստ մի այլ մտածողի, պատուիրել էր, մահից յետոյ ձեռքերը անդամահատել, նրանով ծեծէին փոքրերին, նրանց ցաւ չպատճառելու համար:

Մոլորակի մարդիկ, Մայրսի ամսին են «Մայրութեան» փառաբանման տօն հիմնադրել, որ նաեւ գարնան խինդով առկայծէին իրենց սրտերը: Արմինա-Հայերի նախնիները իրենց ոստանը քաղաքամայր են կոչել, երկիրն իրենց Մայր-Հայաստան, իրենց խօսած լեզուն մայրենի: Մայր Հայաստանը, յաղթ կանգնել է իրենց ոստանի բարձունքին, սուրը պատեանից դուրս հանած, պատրաստ նրա պաշտպանութեան կռուին գնալու: Միայն Արմինա-Հայերի նախնիներն են աստուածացրել մայրութեան պաշտամունքը: Արմինա-Հայաստան երկրում Մայր Անահիտ դիցուհու ու աստուածամարդ խալտի-Հայկի արձաններն էին միայն ոսկեծոյլ եղել: Մայր Անահիտ դիցուհու տաճարներ էին կառուցել Եկեղեցաց գաւառի Երիզա աւանում, աստուածների քաղաքներ՝ Բագարանում, Աշտիշատում:

Ապրիլի վեցին, Արա-մազդի դուստր Մայր Անահիտ դիցուհու փառքի տօնախմբութիւնը կատարում էին Բագարանի տաճարում: Նրա հրապարակում էին Արմինա-Հայաստանի արքան, արքայազուներ, նախարարներ, սեպուհներ, բազմահազար աշխարհային ժողովուրդ: Արքան, Տարօն աշխարհի ձուլի պախուրցից բռնած, քրմապետի հետ մեհեան էին մտնում, իրենց հաւատի արարողութիւնով այն գոհաբերում Մայր Անահիտ դիցուհու բազինի առաջ: Յուլի տաք արիւնն էին շող տալիս նրա մարմնին, այն շիթ-շիթ հոսում էր ներքեւ, բոլորը իրենց ճակատները դրոշմում էին Միհրի լոյսի կեռ-

ուած նշանով . . . խաչ: Աշխարհային մարդիկ իրենց բերքի երախայրիքն էին նուիրաբերում Մայր Անահիտ դիցուհուն: Մեհեանի մուտքի մօտ գինու լեցուն տիկեր էին, գինով լեցուն թասեր էին զարկում, շնորհաւորում Մայր Անահիտ դիցուհու ծնունդը, արքան, բոլորը արբենում էին, գինու արթնած աշխարհիկ վայելքն էր այն: Գուսանները, իրենց տաղերով Մայր Անահիտ դիցուհու գովքն էին անում: Շուրջ պարեր էին բռնում, հայոց արքան էլ պարի էր ելել, ծիրանի պարեգօտի ու վեր պարզած կարմիր թաշկինակի լոյսը ողողել էր մեհեանը, գինով գուարթացած թմկահարր ուժգին զարկում թմբուկը, թնդում էր մեհեանը, կանչում էին՝ «Մայր Անահիտ, եկու՛ր դու էլ մեզ հետ պարի շարքեր մտիր»:

Հնդիկ արիացիները, պարթեւները, շումերները իրենց երկրներ էին տարել Մայր Անահիտ դիցուհուն, որ նրա մայրութեան արարչութիւնը հոսէր իրենց երկրների արտերին, այգիներին, լեռների լանջերին: Մայր Անահիտ դիցուհին Արմինա-Հայաստան լեռնաշխարհ էր եկել «Վահագն Յարդազողի ձանապարհի» տաճարներից, որ իրենց դրախտիկ երկրում սիրոյ հուր կաթէր, բնութեան զարթօնքի լոյս վառէր, գարնան հրդեհ բռնկէր Արմինա-Հայ արի մարդկանց սրտերում: Արմինա-Հայը կայ ու կը լինի՝ նախնիների աւանդութիւնները ու մայրենի երկրի սիրոյ ոգին իրենց հոգիներում ամուր պահելու ու այն որպէս արեւային ջահեր յաջորդ սերունդներին փոխանցելու շնորհիւ: Արմինա-Հայաստանի փառահեղ արիացի տղաներ, հազար-հազար արմիններ Միհրի տաճարում տօնախմբում են Մայր Անահիտ դիցուհու, Վահագնի, Միհրի, Աստղիկի ծնունդը, տեսնէիք ինչպիսի խանտաղատանքով փառաբանում նրանց, անուշ քրմուհիները երգում հին հաւատի շարականներ, ծիրանի փողեր հնչում, թմբուկ զարկում, նախնիների շուրջ պարեր բռնում, աշխարհիկ կեանքի վայելք է այն:

Հռովմի Անտոնիոս անօրէն գորավարը, Արմինա-Հայաստան արշաւանքի ատեն գերեւարել էր Անահիտի արձանը, այն տարել իր տարփածոյ Կլէոպատրայի երկիր: Անյայտ առեղծուածով, նրա անագապիւնէաց զլխամասն է հանգչում անգլիական թագաւորական թանգարանում: Արմինա-Հայեր ցանկանում են այն ետ բերել, քղանքը վրան քանդակել նրա մարմինը, այն կանգնեցնել Եկեղեցաց գաւառի Երիզա աւանի մեհեանում: Հռովմի Կալիկուլա կայսրը կայսերական խնձոյք էր սարքել, երբ նրան հարցրել էին այդքան դրամ ո՞րտեղից, խոստովանել, որ Արմինայում գաւթուած Մայր Անահիտ դիցուհու ոսկեծոյլ արձանի ոտքի մատի արժէքով:

Բեմադրիչ՝ Աշոտ Մալաքեան, Արմինա-Հայու արարման հանձարի լոյսը աշխարհներ տարաւ, «Մայրիկ» շարժապատկերով՝ Հայ «Մայրիկի», իր ազնուագարմ ցեղի Մայր

Անահիտ դիցուհու պաշտամունքը հասաւ աշխարհներ, աւետեց, որ իր ցեղի մօր սէրը՝ «Կնոջից ու գինուց առաւել» ամենամեծարն է:

Մայրերը հրեշտակներ են, անքուն գիշերներ իրենց մանչերի օրօրոցների մօտ օրօր են ասում, նրանց փոքրիկ մտքերը ընկալում են այն, մայրական հոգու սիրոյ անդորր է իջնում իրենց սրտիկներին՝ խաղաղութիւն դէմքերին անուշ քուն են լինում: Արմինա-Հայ բանաստեղծներ երգել են մայրութեան տիեզերական սիրոյ խորհուրդը: Բանաստեղծ Քամառ Քաթիպա երգել էր մայրերի օրօրը՝

Քուն եղիր բալաս, աչերդ խուփ արա  
Նախշուն աչերուդ քուն թող գայ վրայ:  
Օրօր իմ բալաս, օրօր ու նանի,  
Իմ անուշիկիս քունը կը տանի:

Դուն ալ քուն եղիր, ինծի ալ քուն տուր,  
Սուրբ Աստուածամայր, անուշիս քուն տուր:

Օրօր իմ բալաս, օրօր ու նանի,  
Իմ անուշիկիս քունը կը տանի:

Երգահան՝ Բարսեղ Կանաչեան, Քաթիպայի երգին հնչիւններ հիւսել, ինչքան անուշ է այն հնչում, կարծես Գողթան երգիչներից էր այն քաղել:

Եւ ուրիշ մի բանաստեղծ՝ Շիրազի վարդերի բոյրով լեցուն հայոց Շիրազ, «Վահագն Յարդազողի ձանապարհ»-ի Արմինա-Հայ աստուածների տաճարից բերել է մայրերի սիրոյ ղօղանջների խորհուրդը՝

Հազար մի սիրտ բացեցի,  
Ոչ մի անմեռ սէր չգտայ,  
Ծովից խորունկ սէր զգացի,  
Երբ մայրիկիս սիրտը մտայ:  
Մօր սրտում է Աստուած քնած՝  
Լոկ մօր սրտի մէջ է զարթնում,

Աւաղ, առանց Աստուծոյ մնաց  
Իմ որբ կեանքը՝ անյոյս մթնում:

Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Ժուլիա Վարտ Հոուվըրը, 1872 թուականին ժողովրդային շարժում էր սկսել, որպէս խաղաղութեան ձօնուած օր «Մայրերի Օր» կատարել: 1907 թուականին, Ֆիլատելֆիայում, Աննա ձարուիսը արշաւ էր սկսել հիմնադրելու՝ «Մայրերի Ազգային Օր»: ձարուիսը, համոզել էր քաղաքի եկեղեցուն, մայրերին նուիրուած օրը տօնելու Մայրսի երկրորդ Կիրակին՝ իր մօրը մահուան երկրորդ տարելիցի օրը: Իր համախոհների հետ նամակներ էին յղել նախարարներին, քաղաքական գործիչներին՝ մայրերի օրուայ տօնակատարութեան օր հաստատելու: 1914 թուականին, ԱՄՆ-ի նախագահ՝ Վուտրո Վիլսոնը, նախագահական օրինագծով, իւրաքանչիւր Մայրսի ամսուայ երկրորդ Կիրակին հռչակել էր որպէս մայրերի օրուայ տօնակատարութեան օր: Այժմ, աշխարհի շատ երկրներում, «Մայրերի Օր»-ը, որպէս տօնական օր, տօնախմբում են յիշատակուած նոյն օրը:

### ՄԵՐ ՊԱՐՏԱԻՐՈՒԹԻՒՆՆ Է ՏԵՍՆԵԼ

#### Շարունակուած էջ 14-էն

հովցնէ մեզի և մեզ բոլոր շրջապատողներուն աւելի լաւ աշխարհ մը: Մեզ աւելի լաւ մարդ կը դարձնէ: Մեզ աւելի լաւ յիշողներ կը դարձնէ: Վատահօրէն, բոլոր յիշողու-

թիւնները նոյնը չեն: Այսուհանդերձ, բացառիկները մենք երբեք պէտք չէ մոռնանք: The Promiser այս մասին կը վստահեցնէ մեզ: Մենք ալ նոյնը պէտք է ընենք նմանապէս: Անգլերէնէ թարգմանեց՝ ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ



### ԻՏԵԱԼԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՉԱՍԱՐ ՏՂԱՄԱՐԴՈՑ ԵՒ ԿԻՆԵՐՈՒ ՑԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Կնոջ հոգատարութիւն, իսկ տղամարդուն՝ վստահութիւն պէտք է: Երբ տղամարդը հետաքրքրութիւն կը ցուցաբերէ ընկերուհիի զգացմունքներուն հանդէպ եւ կը մտածէ անոր բարեկեցութեան մասին, կինը կը զգայ, որ կը սիրեն զինք, որ ան առանձնապատուկ է տղամարդու համար եւ, բնականաբար, կը սկսի աւելի մեծ վստահութիւն տածել տղամարդու հանդէպ: Նման վերաբերմունք նկատելով՝ տղամարդը կը հասկնայ, որ իրեն կը վստահին եւ կը հաւատան, որ ինքը ամէն ինչ կ'ընէ, որպէսզի իր սիրելիին իրեն առաւելագոյնս լաւ զգայ:

2) Կնոջ պէտք է ընկալուած, իսկ տղամարդուն՝ ընդունիլ այնպէս, ինչպէս որ է: Երբ տղամարդը ոչ թէ ջղաջին, այլ հակառակը՝ ընկալուածով ու հետաքրքրուածութեամբ կը լսէ կնոջ, վերջինս կը զգայ, որ զինք կը լսեն եւ կը հասկնան: Ընկալուած չի նշանակեր կուսակցի զգացմունքներն ու մտքերը, ատիկա կը կայանայ լսածէն զատելու տեղեկութիւնը եւ զայն ճիշդ գնահատելուն մէջ: Երբ կինը տղամարդուն կը մօտենայ սիրով՝ չփորձելով փոխել զինք, վերջինս կը զգայ, որ զինք կ'ընդունին իր բոլոր դրական ու բացասական կողմերով: Չուզենք կերպով զինք ամենեւին իտէյալական չի համարեր, բայց կը հասկնայ, որ չ'ուզեր «կատարելագործել» զինք, հաւատարմով, որ ան ինքը կ'ընէ ատիկա: Նման վերաբերմունքի պարագային տղամարդուն համար աւելի դիւրին է լսել իր սիրելիին, ինչ որ ալ պէտք է կնոջ համար:

3) Կնոջ պէտք է յարգանք, տղամարդուն՝ երախտագիտութիւն: Երբ կնոջ հետ յարաբերութիւններու ժամանակ տղամարդը առաջին տեղը կը դնէ կնոջ իրաւունքները, ցանկութիւնները, մտքերն ու զգաց-

մունքները, կինը վստահ է, որ կը յարգեն զինք: Տղամարդուն կողմէ յարգանք զգացող կնոջ համար շատ աւելի դիւրին է երախտագիտութիւն յայտնել տղամարդուն: Զգալով կնոջ երախտագիտութիւնը, տղամարդը կը հասկնայ, որ իր ջանքերը անտեղի չեն անցած եւ ատիկա կը կրկնուի նոր ուժով, իսկ յարգանքը գուզընկերուհիին նկատմամբ աւելի կը մեծնայ:

4) Կնոջ պէտք է նուիրուածութիւն, տղամարդուն՝ հիացմունք: Երբ տղամարդը հաշուի կ'առնէ կնոջ կարիքները եւ կը հպարտանայ, որ ամէն ինչի մէջ կ'աջակցի անոր, ան կը բաւարարէ կնոջ՝ սիրելի ըլլալու պահանջմունքները: Զգալով, որ տղամարդու կեանքին մէջ կարեւոր տեղ կը գրաւէ, կինը ոչ միայն ինքը կը ծաղկի, այլեւ կը սկսի հիանալ իր գուզընկերոջմով: Վերջինս կը զգայ կնոջ հիացմունքը, այնտեղ նկատելով իւրօրինակ որեւէ յատկութիւն կամ տաղանդ: Ատիկա կրնայ ըլլալ կատակի զգացողութիւն, նպատակասլացութիւն, անկեղծութիւն, բարութիւն, սէր, փոխըմբռնում:

5) Կնոջ պէտք է ըմբռնում, տղամարդուն՝ հաւանութիւն: Երբ տղամարդը վերէն չի նայիր կնոջ զգացմունքներուն ու ցանկութիւններուն, չի վիճիր անոր հետ, այլ կ'ընդունի անոնց օրինականութիւնը, կինը ինքզինք սիրուած կը զգայ: Երբ տղամարդը կնոջ հասկցնել կու տայ, որ կ'ընդունի անոր իրաւունքները, կնոջ կողմէն հաւանութեան կ'արժանանայ: Հոգիի խորքին մէջ, իւրաքանչիւր տղամարդ կը փափաքի իր սիրելիին համար հերոս ու ասպետ ըլլալ: Հաւանութիւնը անոր արարքներուն ընդունումն է կամ այն յոյսը, որ գուզընկերոջ կ'առաջնորդեն բարի նպատակները:

### ՉԱՅԻՉ ՄԱՐԴՈՑ ԻՆՉ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Անոնք պատրաստ են ցոյց տալու իրենց տկարութիւնը: Հմայիչ մարդիկ չեն փորձեր յաղթել ցանկացած բանի մէջ, տպաւորել: Հակառակը, անոնք նոյնիսկ կը փորձեն պարտուիլ: Անոնք պատրաստ են խոստովանելու իրենց անյաջողութիւնը, քանի որ ինքնավստահ են: Ընդունինք, որ դուք կը հանդիպիք ձեր նախկին գործընկերոջ, եւ ան կը պարծենայ նոր կնքած մեծ գործարքով: Մի փորձէք դուք ալ ուրիշ բանով պարծենայ: Ըսէ՛ք՝ «Օհ, ես նոյնիսկ կը նախանձիմ: Ես շատոնց կը փորձէի ատիկա ընել, բայց չէի յաջողեր: Դուն ինչպէ՞ս յաջողեցար»: Մարդու շահաւէտ դիրքը կրնայ ժամանակաւոր ըլլալ, իսկ քու հմայքդ ու մարդոց նկատմամբ տրամադրուածութիւնդ՝ մշտական:

2) Անոնք ցոյց կու տան, թէ ինչ ուրախ են ձեզ տեսնելու համար: Անոնք կը պահեն տեսողական կապը, կը ժպտին, երբ դուք կը ժպտիք, գլխով նշան կ'ընեն, երբ դուք նոյնը կ'ընէք: Իրենց այդ վարքագիծով անոնք ցոյց կու տան, որ կը կեդրոնանան ձեր ըսածին

վրայ: Եւ ատիկա մարդոց մէջ կապ կը ստեղծէ, որ հմայքին էութիւնն է:

3) Անոնք համաձայնութիւն, ոչ թէ հակասութիւն կը փնտռեն: Որոշ մարդիկ պատրաստ են մէկ անգամէն հակառակ կողմը բռնելու եւ վէճ սկսելու: Հմայիչ մարդիկ միշտ կը գտնեն համաձայն կէտեր, իսկ յետոյ արդէն կը կիսուին իրենց կարծիքով:

4) Անոնք կ'օգտագործեն հպման ուժը: Հետազօտութիւնները ցոյց տուած են, որ մարդիկ աւելի լաւ կ'ընկալեն ըսուած խօսքը, երբ անոնք կ'ողեկեցուին հպումով՝ ձեռք սեղմելով, գրկախառնութեամբ, ուսին թիֆփացնելով:

5) Հմայիչ մարդիկ պատրաստ են բախելու իրենց վախերուն եւ տկարութիւններուն հետ: Այդպիսի մարդը չի վախնար վատ տեսք ունենալէ՝ դահուկորդի տարագով, եթէ նոյնիսկ առաջին անգամն է, որ կը կանգնի դահուկներու վրայ: Ատոր համար անոնց աւելի շատ կը յարգեն: Երբ դուք իսկապէս կը տիրապետէք ձեր տկարութիւններուն, մարդիկ չեն ծիծաղիր ձեր վրայ: Անոնք կը ծիծաղին ձեր հետ:

### ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ, ՍԻՐՈՅ ԵՒ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻՐ

Ինչէ՞ն կազմուած է յաջողութեան, սիրոյ եւ երջանկութեան բանաձեւը:

\* Դրական մտքերէ- Յաջողութիւնը նախ եւ առաջ կազմուած է դրական մտքերէն: Եթէ դուք տրամադրուած էք անյաջողութեան կամ ամէն ինչ կ'ընէք պարտուելու համար, ի հարկէ, կը պարտուիք: Հաւատացէ՛ք յաջողութեան, մտածեցէ՛ք յաջողութեան մասին եւ դուք պիտի ունենաք զայն: \* Ճիշդ գործողութիւններէ ու մտադրութիւններէ- Եթէ դուք բացասական կը մտածէք, ուստի ձեր մտադրութիւններն ու գործողութիւններն ալ բացասական պիտի ըլլան: Պէտք է հասկնալ, որ մենք կը կերտենք

մեր ներկան ու ապագան: \* Յոյգերէ- Սիրոյ «կարգաւորումը» բաղկացած է յոյգերէ: Ստիպեցէ՛ք ձեր ուղեղին աւելի յաճախ մտածել սիրոյ, երջանկութեան եւ ուրախութեան մասին, եւ պիտի տեսնէք գործնականի մէջ ուղեղին հնարաւորութիւնները: Զէ՞ որ եթէ դուք ձեզ չօգնէք, ոչ ոք կ'օգնէ ձեզ: \* Ցանկութեան, նպատակներէ եւ երազանքէ- Երազանքներով ապրող մարդիկ հնարաւոր ամէն բան կ'ընեն զայն իրականացնելու եւ ցանկալին ձեռք բերելու համար: Նախ պէտք է սորվիլ գնահատել այն ինչ ունիք, իսկ յետոյ ձգտիք նոր նպատակներու եւ ցանկութիւններու իրականացման:

### ՄՐՏԻ ԿԱԹՈՒԱԾԻ 6 ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ Ի ՅԱՅՏ ԿՈՒ ԳԱՆ ՄԻԱՅՆ ԿԻՆԵՐՈՒ ՄՕՏ

Սրտի կաթուածը վաղաժամ մահուան հիմնական պատճառներէն է: Աւաղ, անիկա կու գայ շատ աննկատ: Սակայն, մինչ այդ, մարմինը մեզի կ'ուղարկէ նախանշաններ, զորս կարելի է արհամարհել: Ընդհանուր նախանշաններ, որոնք կը յուշեն զայլք սրտի կաթուածին մասին: - Ցաւ մէջքի, պարանոցի, ծնօտի եւ ձեռքերու շրջանին: Այս նախանշանները լայն տարածուած են կիններուն մօտ: Անոնք յաճախ շփոթմունքի մէջ կը դնեն կիները, որովհետեւ սրտի կաթուածը առաջին հերթին կը նոյնացուի կրծքավանդակի կամ ձախ ձեռքի ցաւերուն հետ: Ցաւը կրնայ ըլլալ սաստկացող, նուազող կամ սուր, յանկարծակի: Այդ իսկ պատճառով, ամէն անսովոր նախանշանի պարագային պէտք է պարտադիր ստուգուի անցընել:

- Ծակոց ստամոքսի մէջ, սրտխառնոց: Գալիք սրտի կաթուածին նախանշանը կարելի է խառնել սովորական թունաւորման, կուփի կամ այլոցի նախանշաններու հետ: Երբեմն կիները ճնշում կը զգան որովայնի հատուածին մէջ: - Պաղ քրտինք: Պաղ քրտինքը շատ տարածուած նախանշան է կիններուն մօտ: Հիւանդներուն կը թուի, որ անիկա կապուած է ճնշախտի կամ ապրումներուն հետ: Սակայն, եթէ ձեր մօտ առաջ չէին եղած այդպիսի նշաններ, դուք պէտք է դիմէք մասնագէտի: - Ծնշում եւ ցաւ կրծքավանդակի հատուածին: Ցաւ կրծքավանդակին շուրջ, անյարմար

րութեան նշաններ, այրոց, ծանրութեան զգացողութիւն, բոլոր այս նշանները ի յայտ կու գան անկախ անհատի սեռէն: Սակայն, որոշ կանայք կ'ունենան ցաւային զգացողութիւն ոչ թէ ձեռքի ձախ կողմէն, այլ ամբողջ մակերեսով: Եթէ ցաւը կամ ճնշումը չ'անցնիր քանի մը վայրկեանի ընթացքին, պէտք է պարտադիր հեռաձայնել բժիշկի: - Դժուարացած շնչառութիւն, գլխապտոյտ: Շնչառութեան հետ խնդիրները առանց պատճառի՝ սրտի կաթուածի նախանշան են, առաւել եւս այն պարագային, երբ կը նկատուին այլ նախանշաններու հետ: - Յոգնածութեան բարձր աստիճան: Եթէ նոյնիսկ երկարատեւ հանգիստէ ետք դուք յոգնածութիւն կը զգաք եւ չէք կրնար ընել սովորական գործողութիւններ, ուրեմն ատիկա անհանգստացնող նշան է: - Դիմացկունութեան տկարացումը նոյնպէս կրնայ անհանգըստացնող նշան ըլլալ: Եթէ, օրինակ, դուք արդէն դժուարութեամբ կը բարձրանաք մէկ յարկ, մինչ առաջ դիւրութեամբ կը յաղթահարէիք նոյնիսկ 5 յարկը, ուստի ատիկա առիթ է անհանգստանալու սիրտ-անոթային համակարգի առողջութեան մասին: - Այս նշանները չեն երաշխաւորեր պարտադիր սրտի կաթուած: Սակայն, անոնց հանրագումարը, ինչպէս նաեւ նոյն նշաններու յաճախակի կրկնութիւնը արդէն լուրջ առիթ է մասնագէտին դիմելու:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

### ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Շարունակուած էջ 13-էն

կ'ըլլայ փախուստի դիմելու: Որոշ ժամանակ ապաստանելով Հնդկաստան, կը վերադառնայ Հիճազ եւ կը միանայ Օսմանեան կայսրութեան դէմ Արաբական Յեղափոխութեան: Դէպի Տիարպէքիւր աքսորի ճանապարհին, Ղուսէյն ակնատես կ'ըլլայ հայերու հանդէպ Օսմանեան իշխանութիւններու իրագործած սարսափելի դաժանութիւններուն, իսկ Տիարպէքիւրի մէջ ան կը ծանօթանայ հայերու կոտորածին սահմուկեցուցիչ բազմաթիւ մանրամասնութիւններու:

Այս բոլորը ցնցող տպաւորութիւն կը ձգեն անոր վրայ եւ ան կ'որոշէ գրի առնել իր յուշերը: Ֆ. ալ Ղուսէյն հեղինակ է շարք մը աշխատութիւններու, որոնց մէջ ան կը մերկայացնէ թրքական իշխանութիւններուն եւ, մասնա-

ւորապէս, երիտթրքական վարչակարգին դաժանութիւնները հպատակ ժողովուրդներուն՝ արաբներուն եւ հայերուն հանդէպ: 1939-ին Դամասկոսի մէջ լրջ կը տեսնէ անոր «Իմ Յուշերը Արաբական Յեղափոխութեան Մասին» գիրքը, որուն մէջ գետեղուած են հայկական բնակչութեան հանդէպ թուրքերու գործած բռնութիւններու բազմաթիւ նկարագրութիւններ:

Յատկանշական է, որ «Իմ Յուշերը Արաբական Յեղափոխութեան Մասին» աշխատութեան մէջ տեղ գտած Հայոց Յեղասպանութեան վկայութիւնները ընդհանրապէս դուրս մնացած են հայագէտ-ցեղասպանագէտներու տեսադաշտէն: Այս վկայութիւնները առաջին անգամ ըլլալով Ա. Փօլատեանի եւ Լ. Սարգսյանի ժողովածոյին մէջ ներկայացուած են հայերէն եւ արաբերէն տարբերակներով:



### ՊԵՊՕ ՍԻՍՈՆԵԱՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ

Շարունակուած էջ 8-ԷՆ

արեւմտահայերէնի վարպետ ճարտարապետներէն, եւ արուեստագէտ վերարտադրողներէն դասուող վազ-գէն Շուշանեանի մասին:

Սիմոնեան իր հիացմունքը կ'ամրագրէ՝ հայրենական բազմաշնորհ գրողներ «մեր գրականութեան մէջ արձակիկն գեղարուեստական արժէքով ապրող «Գուրգէն Մահարիի, ազգային ձգտումներուն արտայայտիչը հանդիսացող պատգամաբեր» խիզախ գրչի տէր Պարոյր Սեւակի, Սիլվա Կապուտիկեանի եւ Գէորգ Էմինի, արեւմտահայութեան ճակատագրին նուիրուած ստեղծագործութիւններու հեղինակ, Պերճ Զէյթունցեանի եւ «պետական մտածողութեան տէր եւ հայրենասիրական խորհողութիւնը ցոլացնող» գրող Ստեփան Ալաշաշեանի մասին:

Սիմոնեան անմասն չի ձգեր սփիւռքահայ երախտաւորները, ինչպէս՝ «գրող ու հրատարակիչ, սփիւռքահայութիւնը իր ցուրտ ու մութ օրերուն մէջէն առաջնորդող մտաւորականներէն հանդիսացող» Անդրանիկ Անդրէասեանը, մեր ժողովուրդի ապրումներուն, թուիչքներուն, երազներուն, բոլոր, բոլոր բազմատաղանդ եւ բազմավաստակ գրողներ՝ ինչպէս Ժագ Յակոբեանը, Լեւոն Սիւրմէլեանը, Անդրանիկ Մառուկեանը եւ շատեր:

Ինչ կը վերաբերի հայ մշակույթի ջլատմամբ, մեր ինքնութեան պահպանման արմատներէն հեռացողուն՝ Պէպօ Սիմոնեան կը տեսնէ վտանգ՝ «մշակույթ ունենալով, մշակույթով ապրած» մեր ժողովուրդի գոյութեան պահպանման դէմ, քանի «Օտար խաժամուժը կը խլէ մեզմէ հոյորդիներ, որոնք այլապէս կոչուած են հայկականութեան սերնդափոխ յաջորդականութիւնը ապահովել»: Պէպօ Սիմոնեան այդ վտանգին առաջը առնելու համար կը պատգամէ. Կառչիլ մեր մշակույթին, զանիկա տարածելով մեր ժողովուրդի բոլոր խաւերէ ներս, ...մեր եւ ուրիշներու արժէքները սերունդէ սերունդ փոխանցելու առաքելութիւնը դարձնելով մեր Մշակութային առաքելութիւնը»:

Զուգահեռաբար ազգապահպանութեան՝ մշակույթի բերած անհավասար դերին, Պէպօ Սիմոնեան դիտել կու տայ նաեւ, թէ մեր անկախ հայրենիքը ունի իր անփոխարինելի դերը, որու արդիւնաւետութեան մէջ հրամայական կը հանդիսանան պետութեան հզօրացումը, ժողովուրդին բարօրութիւնը, առաջըն առնելով գործազրկութեան տուալտանքներուն, ժողովրդավարութեան եւ արդարութեան գեղծումներուն, ընկերութեան մէջ բոյն դրած անբարոյ կեղծիքին, իշխանաւորներուն շահատակութիւններուն, միահեծան իշխանութիւն հաստատելու ղեկավար վարիչներուն ձգտումներուն եւ արտագաղթին՝ որպէսզի «մեր հայրենիքը օրէնքի երկիր դառնալով, հայաստանահայը դուրսի խաչձէն չհրապուրուի, սփիւռքահայութեան հայեացքները բեւեռուին դէպի հայրենիք «եւ սիրտերը տրոփեն հայրենիքի շողշողուն ապագայէն բխող ապրումներով, ազգապահպանման շունչը երկարող լաւատեսութեամբ»:

Պէպօ Սիմոնեան, անդրադառնալով Սփիւռքահայ գեղարուեստական գրականութեան պարզած վիճակին վրայ՝ կը յայտնաբերէ երեւոյթներ, որոնք մտահոգիչ

ըլլալէ չեն դադրիր:

Այդ մտահոգութիւնները կը տարածուին առողջ գրական-գեղարուեստական քննադատութեան վրայ, որ համաձայն Աւետիք Իսահակեանի բնորոշման «...դայեակն է գրականութեան: Հայ գրողները աւելի արժէքաւոր երկեր կ'իրականացնէին, եթէ ունենային այնպիսի քննադատ ուղեցոյցներ, ինչպիսին եւրոպական ազգերը ունին»: Այդ կապակցութեամբ, Սիմոնեան կը գտնէ, թէ գրական քննադատութիւնը իր դրական եւ օգտակար ներգործութեան կողքին, յաճախ ունի «ժխտելու, քանդելու, ուրանալու կոչը մոլորցիկ, ինչպէս նաեւ, ինչ-ինչ հաշիւներով սնուած ու առաջնորդուած բացասական դեր կը կատարէ եւ ժխտական ազդեցութիւն կը գործէ նորահաս գրողներու վրայ»:

Անդրադառնալով մեր առօրեայ գրականութեան պարզած չափանիշին՝ որ տեղ կը գտնէ մեր գրական ամագիրներուն եւ թերթերուն մէջ, Սիմոնեան ցաւով կը հաստատէ թէ «հոն տիրող ոգին գրականութենէն այլ, տարբեր նկատումներով առաջնորդող ոգի մը եղած է, դժբախտաբար», որ արտայայտութիւն կը գտնէ տիրող անպարկեշտ լուծութեամբ կամ վայրէջք եւ անկում տեսնելով լոյս տեսնող իւրաքանչիւր գիրքի մասին: Պատճառը՝ «...հայ կեանքի իրերամերժ գոյավիճակն է, որ իր տխուր անդրադարձը ունեցած է մեր գրականութեան վրայ», կ'ըսէ Պէպօ Սիմոնեան:

Հոս եւս, Սիմոնեան սփիւռքահայ գրականութեան պարզած այս անիշխանական եւ քոտասիւն կացութեան վերջ տալու մասին դիտել կուտայ հարցադրումով մը թէ՛ «ե՞րբ պիտի ունենանք մեր գրական քննադատութեան բիւրեղացած, մաքուր եւ չեղծանուած չափանիշը, եւ աննախապաշար, հմուտ եւ արդարախոհ գրական քննադատութիւնը, որպէս զի ըստ այդ չափանիշին քննադատուին կամ գնահատուին գրական գեղարուեստական գործերը: Վերջ տրուի երկու չափ երկու կշիռ ի ժամանակավրէպ մօտեցումներուն» եւ կ'եզրակացնէ. «...այս ձեւի գրական քննադատութեան մը ստեղծումով է որ գրականութեան նուիրական տաճարին մէջ կու գան տեղ գրաւելու գրականութեան իսկական կոչեցեալներն ու արժանաւորները ... »:

Իբրեւ որակեալ գրական-մշակութային գործիչ՝ վաստակաշատ գրող՝ Պ. Սիմոնեանի համբաւը շուտով պիտի տարածուի Լիբանանի եւ Հայաստանի մշակույթի գործիչներու դժուարահաճ շրջանակներէ ներս: Շնորհիւ իր բանաստեղծական ջերմագին շնորհներուն, գրականագէտի ազնիւ, անկեղծ եւ անաչառ վերլուծական քննարկումներուն ենթակայ դարձան հայ սփիւռքի եւ հայրենիքի գրողներու գործերը: Նոյնպէս, ան լայնօրէն անդրադարձաւ, ինչպէս հայրենի եւ սփիւռքահայ կեանքէն ներս դիմագրաւուած ազգային, ընկերային, մշակութային եւ անտեսական բովանդակութեամբ, հայութիւնը տագնապեցնող ներկայ ժամանակներու անժամանցելի հարցերու վրայ, որոնք արտայայտութիւն գտան իր վերլուծական հրատարակչական յօդուածներուն մէջ, որոնք լոյս տեսան մեր մամուլին մէջ:

Տալու համար կարգ մը օրինակներ: Յիշենք՝ 160 տարիներու

անցեալ ունեցող արեւմտահայերէնի եւ ազգային քաղաքական պայմաններու բերումով ծնունդ առած՝ արեւելահայերէնի լեզուական եւ ուղղագրական տարբերութեան պարագան՝ Սիմոնեանի նախընտրութիւնը միտելով հանդերձ անկարելի նկատուող երկու լեզուներու՝ մէկ լեզուի վերածուելուն, միայն թէ որդեգրուի մէկ ուղղագրութիւն: Պիտի գրեր Պ. Սիմոնեան. «Բարեբախտութիւն պիտի ըլլար, որ մէկ լեզու եւ մէկ ուղղագրութիւն ունենայինք ազգային ամբողջականութեան եւ միասնականութեան որպէս ուժեղ գրական: ...Հաշտուած ենք ու պիտի հաշտուինք ակամայ այդ իրականութեան հետ՝ գէթ միասնական ուղղագրութեան կենսական հարցի կարգաւորումը ակնկալելով»:

Յիշենք մեր անժամանցելի հայկական դատի կապակցութեամբ իր ունեցած «հայկական դատը հայթուրք երկխօսութիւններու լոյսին տակ» վերլուծական յօդուածին մէջ, Պէպօ Սիմոնեան կը նշէ թուրքիոյ թագուն նպատակները, որոնք կը միտին ջլատել հայութեան հաւաքական ուժը: Կը գրէ ան. «...ո՛չ մէկ մակարդակի երկխօսութիւն կրնայ հայ քաղաքական մտածողութիւնը հեռացնել եւ շեղել հիմնապատճառի ուղիէն...»: Հայ դատի համար, սակայն, կը մնայ ազգային միասնականութիւնը պահելու անհրաժեշտութիւնը, որ վեր կը մնայ ամէն կարգի հատուածակնութենէ եւ այլամերժումէ»:

Եզրափակելու համար այս օրինակներու շարքը, կ'ուզեմ անդրադառնալ «Հայրենիք հասկացողութիւնը սփիւռքահայ մտածողութեան մէջ՝ հեղինակը յուզող անհատական թէ՛ հաւաքական գետիներու վրայ արձանագրուած հոգեբանական իւրաքանչիւր տուեալներու վրայ, ուր Հոյը՝ ժողովուրդին համար կը համարուի ազգային միաւոր, իսկ ժողովուրդը՝ հողին համար որպէս ազգային գերագոյն ու անփոխարինելի արժէք:

Այս սկզբունքով առաջնորդ-

ուած սփիւռքահայը, որ «իր հողէն բունի տեղահանումով տարագրուած է, որ Երկիր վերադառնալու յոյան ու կարօտը ազգային մտածողութեան վերածած հայրենիքով ապրած է միշտ, չ'օտարանար, չի կորսուիր: Պանդուխտ եւ տարագիր հայր ամէնուրեք, ամէն առիթով կը սպասէ տունդարձի կանչն ու հայ կուռնկին խապրիկները»:

Իբրեւ գիտակից մտաւորական, ինչպէս նկատեցիք, բանաստեղծ Պէպօ Սիմոնեան շուքի մէջ չ'թողուց ոչ մէկ արժանաւոր դասական անցեալ եւ ներկայ ժամանակակից գրող: Գրեց բոլորի մասին: Տուաւ իր գնահատականը: Գրեց մեր ազգը յուզող բոլոր հիմնական հարցերու մասին, ինչպէս՝ «Հայկական ինքնութեան ռազմավարութիւնը», Գիրքը՝ ինքնակատարելագործման դպրոց, «Հայրենի հողի երազանքը», «Խոհեր սփիւռքահայ գրականութեան անցեալի, ներկայի եւ ապագայի մասին», «Ուժի տրամաբանութիւնը եւ տրամաբանութեան ուժը եւ Մշակույթը՝ ընտանիքէն, դպրոցէն, եկեղեցիէն մինչեւ մշակութային կառուցները», «Ազգապահպանում եւ մշակույթ», եւ մեր ազգի առօրեայի հետ կապուած բազմաթիւ բնագաւառներէ վերցուած նիւթեր, որոնց իւրաքանչիւրի մասին Սիմոնեան իր վերլուծական կարգին կատարելէ ետք, բանաձեւեց իր արի կեցուածքը:

Պէպօ Սիմոնեան գնահատուած կամուրջներէն մին հանդիսացաւ հայ սփիւռքի եւ հայրենիքի միջեւ: Ան ջատագովը հանդիսացաւ, հայրենիքն ու սփիւռքը իրարմէ հեռացնող, բաժնող եւ գործակցութիւնը արգելակող պատնէշներու վերացման, նոյնպէս եւ, ջատագովը դարձաւ սփիւռքի եւ հայրենիքի կապերու առաւել սերտացման եւ հայ սփիւռքի եւ հայրենիքի գրողներու համագործակցութեան, ազգային, հայրենասիրական, գրաքննադատական, եւ ստեղծագործական, մասնաւորաբար, բանաստեղծական ոլորտներէ ներս:

Jim McDonnell  
LOS ANGELES COUNTY SHERIFF'S DEPARTMENT

## Special Bulletin

# MISSING JUVENILE



**ANDRESSIAN, ARAMAZD JR**  
Male, 5 years old, 55 lbs  
Brown hair and brown eyes



Actual Vehicle  
2004 Gray BMW 4 Door CA/5F1L646



**ANDRESSIAN, ARAMAZD SR.**  
Male, 34 years old  
5'3", 152 lbs, brown hair and blue eyes  
Father of missing juvenile

Detectives from the Los Angeles County Sheriff's Department are seeking assistance in locating the above missing juvenile.

The missing juvenile, Aramazd Andressian Jr, was last seen on the evening of Thursday, April 20, 2017, when he was in the custody of his father, Aramazd Andressian Sr. The father was driving a 2004 Gray BMW 4 door CA/5F1L646 (pictured above). The father was initially detained and has been released from police custody, but the whereabouts of the juvenile are unknown.

Any information on the whereabouts of the missing juvenile, please contact Sheriff's Homicide Bureau.

Any questions or information contact LASD Homicide Bureau.  
ATTN: Det. L. Aguilera or Det. M. Boisvert (323) 890-5500  
LASD Homicide Bureau 1 Cupania Circle, Monterey Park 91755  
Sheriff's File # 017-00040-3199-402  
CRIME STOPPERS  
On Line: <http://lacrimestoppers.org> - phone: 800 222-TIPS (8477) - or smartphone: Download "P3 Tips" mobile app for free or "P3 Mobile" for the hearing impaired



### ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



Հոգեւոյս ԿՈՐԻԻՆ ԱՐՔ. ՊԱՊԵԱՆ-ի վախճանման Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան յատուկ արարողութիւն պիտի կատարուի Կիրակի, Մայիս 14, 2017ին, Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ, 5300 White Oak Ave., յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝  
Գալուստ եւ Յասմիկ Պապեան եւ զաւակները  
Գրիգոր եւ Մարո Քէլէշեան եւ զաւակները  
Տօքթ. Մհեր եւ Նինա Պապեան եւ զաւակները  
Եւ համայն Պապեան, Պարսումեան, Քէլէշեան, Մոմճեան, Աւագեան, Սերոբեան, Նիկոսեան եւ Սթանիշ ընտանիքները, հարազատներն ու բարեկամները:

### ՈՂՋՈՅՆԻ ԳԻՐԵՐ

Շարունակուած էջ 7-էն

գրականութիւն: Իր բանաստեղծական գրքերն ու գրականագիտական հատորները մեր ազգային գրականութեան տաճարի գեղեցիկ եւ նրբատաշ քարեր են: Պէպօ Սիմոնեանի գրական ժառանգութիւնը արդի հայ գրականութեան արժէքաւոր ու վաւերական էջերից է, որ դեռ համոզուած ենք, արժանանալու է առանձնակի ուշադրութեան ու բարձր գնահատանքի:

Երուանդ Տէր-Խաչատուրեան  
Գրաքննադատ  
Երեւան

\*\*\*\*\*

Լիբանանահայ Գրողներու համախմբումը կ'ողջունէ իր քարտուղարութեան հիմնադիր անդամներէն բանաստեղծ, արձակագիր, գրաքննադատ, խմբագիր եւ բազմամեայ կրթական մշակ Պէպօ Սիմոնեանի ծննդեան 80 - ամեակը: Անոր նպաստը մեծ եղաւ լիբանանահայ գրական կեանքի աշխուժացման յատկապէս «Արարատ գրական», «Շիրակ», եւ «Կամար» գրական պարբերաթերթերու խմբագրական կազմերու որպէս անդամ: Պէպօ Սիմոնեան իր արժանի տեղը գրաւած է որպէս վաւերական գրագէտ արդի հայ գրականութեան մէջ իր արձակ, բանաստեղծական եւ գրաքննադատական ստեղծագործութիւններով: Այս առիթով մեր մաղթանքն է որ հետզհետէ նոր հրատարակութիւններով օժտուի իր գրական վաստակը լոյսին բերելով իր արխիւներուն մէջ գտնուող արժէքաւոր ձեռագիրները:

Լիբանանահայ Գրողներու համախմբում

### Ամուլսարի նախագծի տեխնիկական բացերն ու խնդիրները

Շարունակուած էջ 13-էն

լինելու, այսինքն անդիկային թու-նաւորում կարող է տեղի ունենալ: -Նրաւք ասում են, որ ցիանիդը շատ հեշտ է չէզոքացնել:

Յ.Բ. - Յիանիդը, այո՛, որովհետեւ այն շատ ցածր խտութեամբ պիտի լինի, սակայն ցիանիդի հետ նաեւ ծանր մետաղներ պիտի իջնեն՝ ոսկի, արծաթ, քրոմ... ամէն տեսակ մետաղներ կան, դրանք էլ պիտի իջնեն: Եւ եթէ սխալ բան լինի, այդ ջուրն ո՛ւր պիտի գնայ... ասենք թ. գործարանի մէջ սխալ բան պատահեց, եւ ջրի որակը նորմալից աւելի վատ եղաւ, ի՞նչ պէտք է անեն այդ պարագայում: Օրական 600,000 գալոն ջուր պիտի լինի, այդ ջուրը որտեղի՞ց պէտք է վերցնեն, ո՛ւր պիտի գնայ, ի՞նչ ձեւով: Այդ ամէնը պիտի յստակ կերպով ներկայացուի: Յետոյ, օրինակ Ամերիկայում, երբ որ համա-կարգ պիտի դնես, պէտք է 4 կողմը պետոնէ պատ կառուցուի, որ եթէ հենքերից մէկը ծակուի եւ արտադ-

րական ջուրը թափուի, ապա այդ շրջանի մէջ մնայ ու դրանից դուրս չգա:

-Յիանիդը ի՞նչ ցիանիդ է եւ ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ:

Յ.Բ. - Ուրեմն, ցիանիդը (sodium cyanide) խոշոր փոշու ման է: Յիանիդը, եթէ պարզապէս խմես, կը մահանաս, որովհետեւ այն ուտում է թթուածինը, դրա համար թթվածին չես ունենա ու կը մահանաս: Բացի այդ, կարելի է թթուայնութիւնը՝ պէտք է ոչ թէ թթուային լինի, այլ ալկալային եւ դրա համար սողիումի հիդրօքսիդ պէտք է գործածուի, որպէսզի Քե-ը 10-ին մոտ լինի: Ուրեմն, ցիանիդը ծանր մետաղները բռնում է եւ որ բռնեց, արդէն հանելը դժուար է: Յիանիդը կարող եւս վնասագործել քլորիդով եւ ջրածնի պերօքսիդով՝ օքսիդացնող քիմիական նիւթերով: Եթէ, օրինակ, ցիանիդը ջրի մէջ բաց թողնուեց, պէտք է քլորին կամ ջրածնի պերօքսիդ օգտագործես:

-Օրինակ, ի՞նչ պրոբլեմներ կա-

### ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻ

Շարունակուած էջ 7-էն

մօտ Հայաստանի Հանրապետու-թեան դեսպան Աշոտ Քոչարեանի: Հնչակեան կուսակցութեան «Փա-րամազ» մետալը որ յանձնուեցաւ յետ մահու իր կողակիցին Տիկ. Ազատուհինին»:

Գեղարուեստական բաժնի երկ-րորդ ելուցիւթը ներկաներուն համար անակնկալ մը եղաւ: Անոնց հրամց-ուեցաւ Պէպօ Սիմոնեանի երգի վերածուած «Գարնանամուտ է» բանաստեղծութիւնը, կատարողու-թեամբ իր քննիչի դուստր, մեզմէ անժամանակ հեռացած՝ Սիլվա Ջի-լինկիրեանի: Բանաստեղծութիւնը, եղանակն ու մանաւանդ մեկնաբա-նումը, յուզեց ներկաները:

Հանդիսութեան երկրորդ գե-կուցաբերն էր վաստակաշատ գրող, հասարակական գործիչ եւ «Մա-սիս» շաբաթաթերթի երկարամեայ խմբագիր՝ Տօքթ. Արշակ Գազանճ-եան իր ելուցիւթին մէջ շեշտեց բանաստեղծ Պէպօ Սիմոնեանի մտաւորական եւ մշակութային գործիչի արժանիքները, դիտել տալով որ ան շուքի մէջ չթողուց ոչ մէկ արժանաւոր դասական անց-եալ եւ ներկայ ժամանակակից գրող: Գրեց բոլորի մասին: Տուաւ իր գնահատականը: Գրեց մեր ազգը յուզող բոլոր հիմնական հար-ցերու մասին, ինչպէս՝ «Հայկական ինքնութեան ռազմավարութիւնը», Գիրքը՝ ինքնակատարելագործման դպրոց, «Հայրենի հողի երազան-քը», «Խոհեր սփիւռքահայ գրակա-նութեան անցելի, ներկայի եւ ապագայի մասին», «Ուժի տրամա-բանութիւնը եւ տրամաբանութեան ուժը եւ Մշակուցի» ընտանիքէն, դպրոցէն, եկեղեցիէն մինչեւ մշա-կութային կառույցները», «Ազգա-պահպանում եւ մշակուցի», եւ մեր ազգի առօրեայի հետ կապուած

բազմաթիւ բնագաւառներէ վերց-ուած նիւթեր, որոնց իւրաքանչիւ-րի մասին Սիմոնեան իր վերլուծա-կանը կարգին կատարելէ ետք, բա-նաձեւեց իր արի կեցուածքը:

Պէպօ Սիմոնեան գնահատ-ուած կամուրջներէն մին հանդի-սացաւ հայ սփիւռքի եւ հայրենի-քի միջեւ: Ան ջատագովը հանդի-սացաւ, հայրենիքն ու սփիւռքը իրարմէ հեռացնող, բաժնող եւ գործակցութիւնը արգելակող պատ-նէշներու վերացման, նոյնպէս եւ, ջատագովը դարձաւ սփիւռքի եւ հայրենիքի կապերու առաւել սեր-տացման եւ հայ սփիւռքի եւ հայ-րենիքի գրողներու համագործակ-ցութեան, ազգային, հայրենասի-րական, գրաքննադատական, եւ ստեղծագործական, մասնաւորա-բար, բանաստեղծական ոլորտներէ ներս: Տօքթ. Արշակ Գազանճեանի ելուցիւթը կը տպենք «Մասիս»ի սոյն թիւին մէջ:

Պաշտօնական յայտագրի աւար-տին, սրտի խօսքով ելուցիւթեր ունե-ցան ՀՄՄ-ի երկարամեայ ատենա-պետ՝ Տիգրան Սարաֆեան եւ ՍԴՀԿ Վարիչ Մարմնի անդամ Սուրէն Խոտանեան: Անոնք իրենց յուշա-պատումներու ընդմէջէն գնահա-տեցին Պէպօ Սիմոնեանի կարգ մը արժանիքները, ոնոնք մեծապէս տպաւորած էին գիրքէն:

Հանդիսութեան աւարտէն ետք, ներկաները մօտ մէկ ժամ մնացին սրահին մէջ, իրարու հետ բաժնե-լով հաճելի եւ յուզիչ յիշատակներ, կապուած Պէպօ

Սիմոնեան ընկերոջ, դաստի-արակին, մտաւորականին, մշակու-թի եւ հասարակական գործիչին հետ: Պէպօ Սիմոնեան անձը թէեւ ֆիզիքապէս հեռացած է մեզմէ, բայց իր թողած յիշատակներն ու մանաւանդ բերուած վաստակը մեզի հետ են ու կը մնան:

րող եւ ծագել կոնկրետ Ամուլսարի դէպքում՝ Ելնելով Ձեր ունեցած ին-ֆորմացիայից եւ այն պատասխան-ներից, որ Ձեզ տուել են:

Յ.Բ. - Ամէն ձեւի պրոբլեմ կարող է լինել, որովհետեւ այդքան ջուր պէտք է օգտագործեն: Նոյ-նիսկ ամենապարզ բանը՝ ջրամբա-րը ձեռքով սառցակալում է չէ՞, այդ սառցոյցի մէջ ցիանիդն ինչ-պէ՞ս պիտի թափեն: Անձրեւը որ գա, այդ հսկայական տեղում հսկա-յական քանակի ջուր պիտի ար-տադրուի. ի՞նչ պիտի լինի այդ ջուրը: Պէտք է գան եւ մեզ պիտի բացատրեն: Այսպիսի ծրագրի հա-մար, որ միլիոնների ծրագրի է, իրենց պարտականութիւնն է, որ երբ որ մենք ուզենք, մեզ բացատ-րեն: Այդքան դրամ են առնելու, չե՞ն կարող բերել մարդիկ, որ բացատրեն: Այս պահին ես ամէն ինչ չեմ կարող ասել, բայց երբ որ իրենք բացատրեն, ես կը կարողա-նամ հարցեր տալ:

-Որպէս անվիճուած...

Յ.Բ. - Յաւալի է, որ Հայաս-տանում որոշում կայացնողները չունեն համապատասխան մասնա-

գիտական հմտութիւններ, որակա-ւորում եւ փորձ, կողմնապայցուած են եւ թույլ են տվել, որ նման աղետալի ծրագիրն այսքան առաջ շարժվի: Այս ծրագիրն ու ընկե-րութիւնը պէտք է առաջին իսկ օրից մերժուած լինէին՝ հաշուի առնելով Լիդիանի-

Այժմ, իմ կարծիքով, բոլորն են յայտնուել վատ վիճակում, եթէ գիտակցում են իրավիճակի լրջութիւնը: Ամուլսարի ծրագրով Հայաստանի կորուստները բազմա-կի անգամներ գերազանցելու են տնտեսական զարգացման օգուտնե-րին: Դրանցից մեծագոյն վտանգը հանքերի թթուային դրենաժն է, ինչպէս վերը նշել եմ: Ջերմուկն ու Ամուլսարը փորձադաշտ չեն կա-րող լինել ոչ մեկի համար:

Իմ մասնագիտական խոր-հուրդն է՝ չեղարկել այս ծրագիրը աղետալի հետեւանքներից խուսա-փելու համար եւ թույլ տալ Հայաս-տանին, շահագրգիռ ներդրողների համագործակցութեամբ, այլընտ-րանքային ծրագրեր մշակել՝ Ամուլ-սարի տարածքի առանձնապատ-կութիւնները հաշվի առնելով:

**SEROP'S CAFE**  
GREEK & LEBANESE FOOD  
SERVING BATON ROUGE SINCE 1979



### «Մանչեսթեր Եունայթդսի» Անպարտելի Շարքն Աւարտուեց Լոնտոնում

Ա ն գ լ ի ա չ ի առաջնութիւնում «Մանչեսթեր Եունայթդի» անպարտելի շարքն աւարտուեց 26-րդ խաղում: Պրեմիեր լիգայի 36-րդ տուրում մանչեսթերցիները Լոնտոնում մրցեցին «Արսենալի» հետ եւ պարտուեցին 0:2 հաշուով:



Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը խաղը սկսել էր «Մանչեսթեր Եունայթդի» մեկնարկային կազմում: Առաջին խաղակէսն անցնում էր հաւասար պայքարում: 2 թիմերն էլ ունեցան կողային պահեր, սակայն ընդմիջման գնացին 0:0 հաշուի ժամանակ: «Մանչեսթեր Եունայթդի» 100 տոկոսանոց կողային պահ կորցրեց անգլիացի յարձակուող Ուեյն Ռունին:

«Արսենալն» աւելի ակտիւ սկսեց երկրորդ խաղակէսը եւ սկզբնաժամում խփեց 2 կոլ: Հաշիւը 54-րդ րոպէին բացեց շուէցարացի կիսապաշտպան Գրանիտ Ջական, որի հարուածից յետոյ գնդակն անդրադարձի օգնութեամբ յայտնուեց Դաւիդ Դե Նեյլի պաշտպանած դարպասում: 3 րոպէ անց լոնտոնեան ակումբի երկրորդ կոլը խփեց «Մանչեսթեր Եունայթդի» նախկին յարձակուող Դենի Ուելթեկը: 61-րդ րոպէին Հենրիխ Մխիթարեանին փոխարինեց Ջեսի Լինգարդը, իսկ մնացած ժամանակահատուածում դարպասի նոր գրաւումներ չարձանագրուեցին:

«Մանչեսթեր Եունայթդի» Անգլիայի առաջնութիւնում չէր պարտուել նախորդ 25 խաղերում՝ սահմանելով ակումբային ռեկորդ: Պրեմիեր լիգայում մանչեսթերցիները նախորդ անգամ պարտուել էին 2016-ի Հոկտեմբերին՝ 4 անպատասխան կոլ բաց թողնելով «Չելսիի»:

Այս յաղթանակից յետոյ Արսէն Վենգերի թիմը վաստակեց 53 միաւոր եւ արդէն 2 միաւոր է հետ 5-րդ տեղում գտնուող «Մանչեսթեր Եունայթդի»-ն, որը մէկ խաղ աւելի է անցկացրել:

### Եւրոպայի Առաջնութիւն. Հայ Ըմբիշներն Աւարտեցին Ելոյթները

Յունահունիական ըմբշամարտի Հայաստանի հաւաքականը Սերբիայի Նովի Սադ քաղաքում աւարտին մօտեցող Եւրոպայի առաջնութիւնում ելոյթն աւարտեց մէկ պրոնզէ մետալով, որը նախօրէին 98 կգ քաշային կարգում նուաճել էր Օլիմպիական ախոյեան Արթուր Ալեքսանեանը:



Եւրոպայի առաջնութեան վերջին օրը Հայաստանն ունէր 4 ներկայացուցիչ՝ Ռաֆայէլ Ալեքսանեանը (71 կգ), Կարապետ Չալեանը (75 կգ), Սարգիս Քոչարեանը (80 կգ) եւ Մաքսիմ Մանուկեան (85 կգ), որոնք մետալ չնուաճեցին:

Կարապետ Չալեանը պայքարը սկսել էր որակաւորման փուլից, որտեղ 6:2 հաշուով յաղթել էր սերբ Վիկտոր Նեմեային, իսկ 1/8 եզրափակիչում 2:1 հաշուով պարտութեան էր մատնել թուրք էմբիշի կուշին: Երրորդ գօտեմարտում գիւմրեցի ըմբիշը 0:4 հաշուով պարտուեց հունգարացի Տամաշ Լորինցին, որն էլ պարտութիւն կրեց կիսաեզրափակիչում:

Մաքսիմ Մանուկեանը որակաւորման փուլում 2:1 հաշուով ուժեղ էր գտնուել վրացի Ռոբերտ Կոբիաշվիլուց, իսկ 1/8 եզրափակիչում 2:0 հաշուով յաղթել էր սերբ Դեյան Ֆրանկոյովիչին, որը որակաւորման փուլում պայքարից դուրս էր թողել Ռիո-2016 օլիմպիական ախոյեան, ռուսաստանցի Դաւիդ Չակվետաձեին (7:4): Քառորդ եզրափակիչում Մանուկեանը 1:2 հաշուով պարտութիւն կրեց Գերմանիան ներկայացնող Ռամսին Ագիգսիբից, որը չկարողացաւ դուրս գալ եզրափակիչ:

Ռաֆայէլ Ալեքսանեանը (71 կգ) որակաւորման փուլում 1:6 հաշուով պարտուել էր թուրք Մուրատ Դազին, իսկ Սարգիս Քոչարեանը (80 կգ) մեկնարկել էր 1/8 եզրափակիչից՝ 1:2 հաշուով պարտուելով ուկրաինացի Դիմիտրի Պիշկովին: Ալեքսանեանին ու Քոչարեանին յաղթած ըմբիշները եւս չեն կարողացել դուրս գալ եզրափակիչ, եւ Հայաստանի ներկայացուցիչները գրկուեցին պրոնզէ մետալի համար պայքարելու հնարաւորութիւնից:

Յիշեցնենք, որ յունահունիական ըմբշամարտի Եւրոպայի առաջնութեան առաջին օրը Օլիմպիական ախոյեան Արթուր Ալեքսանեանից բացի, հանդէս էին եկել նաեւ Գէորգ Դարիբեանը (59 կգ), Կարէն Ասլանեանը (66 կգ) եւ Վաչիկ Եղիազարեանը (130 կգ), որոնք մետալ չէին նուաճել: Արթուր Ալեքսանեանն էլ ծնկի վնասուածք էր ստացել մարզման ժամանակ եւ դեռ մինչեւ անցած շաբաթ հարցականի տակ էր նրա մասնակցութիւնը Եւրոպայի առաջնութեանը:

### Դոնեցկի «Շախտյորն»՝ Ուկրաինայի Ախոյեան



Դոնեցկի «Շախտյորն» 10-րդ անգամ հռչակուեց ֆուտպոլի Ուկրաինայի ախոյեան: Առաջնութեան 28-րդ տուրում «Շախտյորն» խաղովում 3:2 հաշուով պարտութեան մատնեց Լուգանսկի «Ջարչային» եւ անհասանելի դարձաւ կիւեւի «Դինամոյի» համար ավարտից չորս տուր առաջ: «Շախտյորն» ունի 75 միաւոր, մէկ հանդիպում քիչ անցկացրած «Դինամոն»՝ 58 միաւոր:

«Շախտյորի» պորտուգալացի գլխաւոր մարզիչ Պաուլու Ֆոնսեկայի համար նորամուտի մրցաշրջանը թիմում դարձաւ ախոյեանական: Դոնեցկի թիմը նուաճեց նաեւ Ախոյեանների լիգայի խմբային մրցաշարի ուղեգիր:

### 16 Տարի Անց «Սպարտակը» Դարձաւ Ռուսաստանի Ախոյեան

Մոսկուայի «Սպարտակը» 16 տարուայ ընդմիջումից յետոյ հռչակուեց ֆուտպոլի Ռուսաստանի ախոյեան:

Ռուսաստանի առաջնութեան 27-րդ տուրում «Ջենիթը» Սանկտ Պետերբուրգում նուազագոյն հաշուով պարտուեց «Թերեկին» եւ 52 միաւորով մնաց երրորդ տեղում:

«Սպարտակն» ունի 53 միաւոր եւ առաջնութեան աւարտից 3 տուր առաջ 10 միաւոր առաջ է երկրորդ տեղում գտնուող ԲԿՄԱ-ից: Նախորդ անգամ մոսկովեան ակումբը Ռուսաստանի ախոյեան դարձել է 2001 թուականին:

### «Բարսելոնան» աջակցում է Կատալոնիայի Անկախացման Հանրաքուէի Անցկացումը

«Բարսելոնան» հանդէս է եկել պաշտօնական յայտարարութեամբ՝ աջակցելով Կատալոնիայում հանրաքուէի անցկացմանը:



Ակումբը չի յայտնել իր դիրքորոշումը Կատալոնիայի անկախացման հարցում՝ միայն նշելով, որ կողմ է կատալոնիայում հանրաքուէի անցկացման արշաւին:

Յիշեցնենք, որ 2014 թուականին «Բարսելոնան» կողմ էր արտայայտուել Կատալոնիայի անկախացման հանրաքուէին, սակայն Սպանիայի Սահմանադրական դատարանը Կատալոնիայում հարցումների եւ հանրաքուէի անցկացման մասին օրէնքի գործողութեան դադարեցման մասին որոշում էր ընդունել:

### ՖԻՖԱ-ն Չեղեալ համարեց Լիոնել Մեսիի Որակազրկումը

ՖԻՖԱ-ի վճռաբեկ կոմիտէն բաւարարել է Արժենտինայի հաւաքականի եւ «Բարսելոնայի» յարձակուող Լիոնել Մեսիի անունից Արգենտինայի ֆուտպոլային ասոցիացիայի ներկայացրած բողոքը ՖԻՖԱ-ի կարգապահական կոմիտէի որոշման դէմ, որով ֆուտպոլիստը որակազրկուել էր Արժենտինայի հաւաքականի չորս խաղով: Այդ մասին հաղորդում է ՖԻՖԱ-ի պաշտօնական կայքը: Բողոքը բաւարարուել է Մեսիի արարքի ապացոյցների բացակայութեան պատճառով:

Յիշեցնենք, որ Չիլիի հաւաքականի դէմ աշխարհի առաջնութեան ընտրական հանդիպման ժամանակ Մեսին հայհոյել էր եզրային մրցավարի ուղղութեամբ: Ֆուտպոլիստը յետագայում յայտարարել էր, որ մրցավարին չի անպատուել, հայհոյանքները եղել են անհասցէ:

Ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականն Արմէն Մկրտչեանի գլխաւորութեամբ Եւրոպայի առաջնութիւնում նուաճել էր 3 պրոնզէ մետալ: Վոլոդիա Ֆրանգուլեանը (61 կգ), Գրիգոր Գրիգորեանը (74 կգ) եւ Լեւան Բերիանիձեան (125 կգ) գրաւել էին երրորդ տեղը, իսկ Գարիկ Բարսեղեանը (57 կգ), Նարեկ Սիրունեանը (65 կգ), Վահէ Թամրազեանը (86 կգ) եւ Գէորգի Կետուել (97 կգ) յաջող հանդէս չէին եկել: